ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

«19» մարտի 2016թ. N 2-L

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1523-Ն որոշման 3-րդ կետի 4-րդ ենթակետով հաստատված կանոնադրության 32-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Հայաստանի զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի զարգացման հիմնադրամի 2015 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
Հայաստանի զարգացման հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի
19 03 2016թ.N 2-Հ որոշման

Development Foundation
of Armenia

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ I. ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 4

1) ՀԱՆՐԱՃԱՆԱՉ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԵՎ ՄՈՒՏՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ. 4

2) ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑԱԲԵՐՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ. 14

ա) Արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում միջոցառման շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները. 14

բ) Արտերկրում սերտիֆիկացման և դեղերի գրանցման համաֆինանսավորում միջոցառման շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները. 16

3) ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ, ՀԱՅԿԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ԱՌԱՋՄՂՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ՀԱՅԿԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ 17

ա) Արտերկրում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում միջոցառման շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները. 17

բ) Միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովում միջոցառման շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները. 25

գ) Արտահանմանն օժանդակող կառույցների ներկայացուցիչների և դիստրիբյուտորների այցելություններ Հայաստան և/կամ արտերկիր, գործարար կապերի հաստատում միջոցառման շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները. 44

4) ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ. 48

5) ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ. 51

ԳԼՈՒԽ II. «ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» 2015 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 52

1 ՀԱՅԿԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ԽԹԱՆՈՒՄ (ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԳՈՎԱԶԴԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ) 52

1.1 Գովազդատեղեկատվական համակարգ 52

1.2 Միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ներկայացում 56

1.3 Օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջության ոլորտի մասնագետների և պոտենցիալ ներդրողների Հայաստան ճանաչողական այցերի կազմակերպում 59

2 ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ 61

2.1 Պետական աջակցություն «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման ու պահպանման» ՀԿ-ին՝ ավանդական ուտեստների մրցույթ փառատոնի կազմակերպման համար 61

2.2 Պետական աջակցություն «Արենի» փառատոն» հիմնադրամին՝ Գինու փառատոնի կազմակերպման համար 61

2.3 Զբոսաշրջության միջազգային օրվան նվիրված տոնակատարության կազմակերպում 62

2.4 Պետական աջակցություն այլ փառատոնների ու տոնակատարությունների կազմակերպմանը 62

3 ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 63

3.1 «Պետական աջակցություն զբոսավարների միջազգային ուսումնական կենտրոնի գործունեությանը» 63

3.2 Զբոսաշրջային տների (B&B) համակարգի և մարդկային ռեսուրսների զարգացում 63

4 ՀՀ ՄՐՑՈՒՆԱԿ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԽԹԱՆՈՒՄ 64

5 ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 65

ԳԼՈՒԽ III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՄԻՏ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԳԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 66

1. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԳԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ 66

2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 69

3. Ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագիր 73

4. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ 73

5. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ 80

ԳԼՈՒԽ Ի. ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1) ՀԱՆՐԱՃԱՆԱՉ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԵՎ ՄՈՒՏՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

- Հիմնադրամը և Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) Միությունը՝ Հայաստանում Կանադայի դեսպանության հետ համատեղ 2015 թվականի մարտի 15-18-ը կազմակերպել են Կանադայի առևտրային առաքելության այցը Հայաստան՝ Հայաստանում Կանադայի արտակարգ և լիազոր դեսպանի գլխավորությամբ:

Այցի շրջանակներում պատվիրակության անդամները հանդիպումներ են ունեցել ՀՀ վարչապետի, ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալի, ինչպես նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարի հետ:

Միջոցառման ներքո 2015թ. մարտի 16-ին Արմենիա Մարիոթ հյուրանոցում մեկնարկեց հայ-կանադական գործարար կապերի զարգացման պաշտոնական նիստ՝ տարբեր գերատեսչությունների ղեկավարների մասնակցությամբ, որի ժամանակ ներկայացվել են ՀՀ ներդրումային և գործարար միջավայրի, ՀՀ-ում գործող ազատ տնտեսական գոտիների, ՀՀ հանքաարդյունաբերության, հեռահաղորդակցության և ինտերնետային կարգավորումների, գյուղատնտեսության և գյուղվերամշակող արդյունաբերության վերաբերյալ ոլորտային շնորհանդեսներ:

Միջոցառման շրջանակներում տեղի են ունեցել նաև 3 կլոր սեղանի քննարկումներ՝ Հայաստանում գործող կանադական ընկերությունների հաջողված փորձի ներկայացման, ՀՀ սննդի ներմուծման և արտահանման պահանջների /հատկապես անասնաբուժությանը վերաբերվող ՀՀ իրավական պահանջների ու կարգավորումների/ և ՀՀ-ից արտերկիր բեռնափոխադրման պահանջների ու ստանդարտների վերաբերյալ: Կանադական ընկերությունների ցանկությամբ կազմակերպվել է շրջայցեր համապատասխան հայկական կազմակերպություններ ու գերատեսչություններ:

Կայացել են շուրջ 160 երկկողմ հանդիպումներ հայ և կանադացի գործարարների միջև՝ 65 հայ գործարարներ հնարավորություն ունեցան հանդիպել և բանակցել 13 կանադացի գործարարների հետ, ովքեր նախնական հետաքրքրություն էին հայտնել Հայաստանում գործնական կապեր հաստատելու և սերտորեն համագործակցելու մասին: Մասնավորապես, սննդի (մսամթերքի վերամշակում), հանքաարդյունաբերության, տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների, տրանսպորտի, լոգիստիկայի, իրավաբանական և խորհրդատվական ծառայությունների մատուցման և այլ ոլորտներում:

• 2015թ. մարտի 23-25-ը Հիմնադրամը Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության հետ համատեղ կազմակերպել է հայ-լիտվական երկրորդ գործարար համաժողովը՝ շուրջ 100 մասնակից: Համաժողովի շրջանակներում Հայաստան են ժամանել լիտվական ընկերությունների 20 ներկայացուցիչներ, պատվիրակության ղեկավարն էր Լիտվայի արդյունաբերողների միության նախագահը:

Միջոցառման շրջանակներում կազմակերպվել է կլոր սեղան և անցկացվել են շուրջ 80 երկուստեք հանդիպումներ, ինչպես նաև լիտվական ընկերությունների առաջարկով՝ շրջայցեր համապատասխան հայկական կազմակերպություններ:

Ստորագրվել են նաև համատեղ գործունեության հուշագրեր Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության և Լիտվայի արդյունաբերողների միության միջև, Հիմնադրամի և Լիտվայի արդյունաբերողների միության, ինչպես նաև ՀՀ և Վիլնյուսի առևտրաարդյունաբերական պալատների միջև:

Միջոցառման շրջանակներում իրականացված երկուստեք հանդիպումների արդյունքում արձանագրվել են հետևյալ արդյունքները՝

- ✓ լիտվական «Global BOD Group» արևային վահանակներ արտադրող խոշոր ընկերություններից մեկը ծանոթացավ «Siemens» ընկերության արտոնագրված գործընկեր, հայկական «Simartek» ընկերության գործունեությանը, որն արտադրում է ցածր և միջին լարման էլեկտրասարքավորումներ:

  Բանակցությունների արդյունքում լիտվական և հայկական ընկերությունները կնքել են համագործակցության հուշագիր՝ ՀՀ-ում արևային վահանակների արտադրման կազմակերպման վերաբերյալ /ծրագրի իրագործումը մինչև 2017թ., ընդհանուր ներդրումները կազմում են 10 մլն եվրո/:
- ✓ «Սամ-Հար» ՍՊԸ-ն («Սիփան» պահածոների և ոչ ոգելից ըմպելիքների գործարան) կնքել է պայմանագիր լիտվական «Միրգա» ընկերության հետ և արդեն իսկ արտահանել առաջին խմբաքանակ արտադրանքը Լիտվա:
- ✓ լիտվական «Արգինտա» ընկերությունը (մետաղյա կոնստրուկցիաների արտադրություն և ջրակայուն համակարգերի մշակում) փակել է իր ռուսաստանյան մասնաճյուղը և ներկայումս դիտարկում է Հայաստանում մասնաճյուղի գրանցման հարցը:

• 2015 կայացած Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) տարեկան ժողովին մասնակցել է ՀՀ էկոնոմիկայի նախարարի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էին ՀՀ կենտրոնական բանկի, Հիմնադրամի և Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամի ներկայացուցիչները:

ՎԶԵԲ Կառավարիչների ժողովի լիագումար նիստի ժամանակ, քննարկվել են բանկի առաջիկա 5 տարիների ռազմավարական ուղղությունները, որոնք ընդգրկվել են «2016-2020թթ. Ռազմավարական և Կապիտալ Բազա» փաստաթղթում:

Հայաստանի պատվիրակության կողմից նշվել է, որ մտքերի և փորձի փոխանակման առումով տարեկան ժողովի հանդիսանում է լավ հարթակ, ինչպես նաև կարևորել է ՎԶԵԲ-ի կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերը, մասնավորապես, կայուն էներգետիկայի, հանքաարդյունաբերության և ՓՄՁ ոլորտներում:

Հայաստանի զարգացման հիմնադրամի կողմից ներկայացվել է Հայաստանի վերաբերյալ շնորհանդեսային նյութ, բացի այդ քննարկումների ժամանակ նշվել է, որ Հայաստանի երկարաժամկետ տեսլականն է ապահովել բարձր չափանիշներին համապատասխան ենթակառուցվածքներ, մարդկային կապիտալի հաստատուն զարգացում՝ ստեղծելով լավագույն պայմաններ գործարարության համար:

• Հայաստանի Հանրապետության վարչապետ Հովիկ Աբրահամյանի Չեխիայի Հանրապետություն պաշտոնական այցի շրջանակներում հունիսի 2-ին Պրահայում կայացավ հայ-չեխական գործարար համաժողովը, որը կազմակերպվել էր Հիմնադրամի և Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության կողմից: Միջոցառմանը ներկա էին ավելի քան 150 գործարարներ Հայաստանից և Չեխիայից:

Բացման խոսքով հանդես եկան Հայաստանի Հանրապետության վարչապետ Հովիկ Աբրահամյանն ու Չեխիայի Հանրապետության վարչապետ Բոհուսլավ Սոբոտկան, ովքեր իրենց խոսքում կարևորեցին հայ-չեխական կապերի և տնտեսական հարաբերությունների ակտիվացումն ու զարգացման հեռանկարները: Հիմնադրամի կողմից ներկայացվեց Հայաստանի տնտեսության ներկա ներուժն ու ներդրումային հնարավորությունները:

- Հիմնադրամի նախաձեռնությամբ 2015թ. հունիսի 10-ին Բրյուսելում կազմակերպվեց «Համագործակցության հնարավորությունները Հայաստանի և Բելգիայի միջև» գործարար համաժողովը, որին մասնակցում էին 45 բելգիական ընկերությունների ներկայացուցիչներ: Բելգիացի գործարարները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել համաժողովի նկատմամբ՝ պայմանավորված ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությամբ՝ Հայաստանը դիտարկելով որպես կամուրջ դեպի Եվրասիական տնտեսական միության շուկա:

Հիմնադրամի գործադիր տնօրեն Արման Խաչատրյանը՝ «Նոր հնարավորություններ Արևելքի և Արևմուտքի խաչմերուկում» թեմայով իր շնորհանդեսում բելգիացի գործարարներին ներկայացրել է Հայաստանի գործարար մթնոլորտի գրավչությունը, ներդրումային հնարավորությունները և համագործակցության հեռանկարները:

- Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում ԵՆԲ գլխավոր քարտուղարի և Հիմնադրամի գործադիր տնօրենի կողմից 2015.թ. հունիսի 12-ին ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ Եվրոպական Ներդրումային բանկի և Հայաստանի զարգացման հիմնադրամի միջև:

Փոխըմբռնման հուշագրի ստորագրմամբ կողմերը վերահաստատեցին իրենց հետաքրքրությունն ու կամքը Հայաստանի և Եվրոպական ներդրումային բանկի միջև համագործակցությանը նոր որակ ու բովանդակություն հաղորդելու վերաբերյալ, հայտնեցին իրենց մտադրությունը բացելու նոր հնարավորություններ ներդրումային ծրագրերի մշակման և ներդրումների ներգրավման, ներքին և արտաքին ֆինանսական աջակցությամբ իրականացվող

ծրագրերի համաֆինանսավորման, տեխնիկական օժանդակության, արտահանման դիվերսիֆիկացման և աշխատատեղերի ստեղծման համար:

• 2015 թվականի հունիսի 30-ին կայացավ **«Տնտեսական օրակարգ 2015»** համաժողովը՝ ՀՀ վարչապետի մասնակցությամբ: Համաժողովին քննարկվել են Հայաստանում առկա տնտեսական խնդիրներն ու դրանց լուծմանն ուղղված ծրագրերը, եղել են առաջարկներ: Համաժողովի օրակարգը բավականին հագեցած է եղել տնտեսության հիմնական ոլորտների և ճյուղերի վերաբերյալ քննարկումներով, որին մասնակցել են թվով 40 անձ:

Համաժողովի օրակարգային թեմաներից մեկը «Հայաստանի տնտեսական զարգացման ռազմավարություն. ինովացիոն առաջընթացի ուղին» փաստաթղթի նախագծի ներկայացումն էր: Վարչապետն իր խոսքում անդրադարձ է կատարել նաև հասարակությանն ամենաշատ հուզող էներգետիկ ոլորտին:

• 2015 թվականի հուլիսի 8-ին Հիմնադրամը Բրյուսելում ՀՀ դեսպանատանը՝ համագործակցության և փոխըմբռնման հուշագրեր է ստորագրել Վալոնիայի արտահանման և ներդրումների գործակալության, Վալոնիայի ձեռնարկությունների միության և Բրյուսելի առևտրի պալատի հետ՝ ուղղված ներդրումային ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, ներքին և արտաքին ֆինանսական աջակցությամբ իրականացվող ծրագրերի համաֆինանսավորմանը, տեխնիկական օժանդակությանը, արտահանման դիվերսիֆիկացման ու աշխատատեղերի ստեղծմանը:

• 2015թ. հոկտեմբերի 15-ին Իրանի առաջին փոխնախագահի այցի շրջանակներում Հիմնադրամը Երևանում կազմակերպել է Հայաստան-Իրան գործարար համաժողով, մասնակցում է 300-ից ավելի գործարար Հայաստանից և Իրանից:

• 2015թ. նոյեմբերի 9-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարի այցի շրջանակներում Հիմնադրամը Թեհրանում կազմակերպել է Հայաստան-Իրան գործարար համաժողով, որին մասնակցում էին ավելի քան 280 իրանական և հայ գործարարներ: Միջոցառմանը ակտիվ ներգրավված էր նաև հայ համայնքը:

Գործարար համաժողովի շրջանակներում տեղի ունեցան 200-ից ավելի երկկողմ /B2B/ հանդիպումներ՝ SS, ճշգրիտ ճարտարագիտության, ոսկերչության, սննդի վերամշակման, գյուղատնտեսության, շինարարության և շինանյութի, տրանսպորտային և լոգիստիկ

ծառայությունների, բանկային և խորհրդատվական, հանքաարդյունաբերության և այլ ոլորտները ներկայացնող հայ և իրանցի գործարարների միջև:

Միջոցառման արդյունքում.

- ✓ երկու երկրների արտահանման ապահովագրության գործակալությունների միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ արտահանման գործընթացը խթանելու նպատակով,
- ✓ ոսկերչության ոլորտի ընկերությունները ստացան տվյալ բնագավառը կարգավորող իրավական դաշտի՝ այդ թվում ներքին կանոնակարգերի վերաբերյալ համապարփակ պատկերացում: Ընկերությունները եզրահանգել են, որ իրենց արտադրանքը մրցունակ է իրանական շուկայում: Նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել Թեհրանում ոսկերչական նմուշների ցուցադրության կազմակերպման շուրջ,
- ✓ ՏՏ ոլորտի ներկայացուցիչներն իրանական ընկերությունների հետ հանդիպումների ընթացքում ձեռք են բերել մի շարք պայմանավորվածություններ, մասնավորապես, ոլորտում ինֆորմացիոն կառավարման համակարգերի ծառայությունների մատուցման և հայկական պլանշետների ու հեռախոսների արտահանման հնարավորությունների քննարկման ուղղությամբ,
- ✓ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ ՌԱՈ Մարս գործարանի տարածքում գտնվող ԱՏԳ-ում պլաստիկ պալետների արտադրություն հիմնման մասով: Իրանից արդեն իսկ ուղարկվել են նմուշներ: Աշխատանքներ է տարվում մեկ այլ իրանական ընկերության հետ, որը հետաքրքրված է ԱՏԳ-ում հիմնել հաստոցների հավաքմամբ զբաղվող ընկերություն: Նշենք, որ իրանական ընկերության ներկայացուցիչը արդեն իսկ այցելել է Հայաստան,
- ✓ ներկայումս աշխատանքներ է տարվում իրանական ընկերության հետ «Մերիդիան» ոսկերչական ազատ տնտեսական գոտում գործունեություն ծավալելու ուղղությամբ,
- ✓ հայկական մեկ այլ ընկերություն համաժողովի արդյունքում աշխատանքներ է իրականացնում Իրանում «Հայաստանի մասնավոր առևտրի պալատ» ստեղծելու ուղղությամբ, որը կզբաղվի ՀՀ-ից Իրան և Իրանից ԵՏՄ հայկական և իրանական ապրանքների արտահանմամբ: Ընկերությունը Իրանում նախատեսում է մասնակցել նաև շինարարության բնագավառում տարբեր տենդերների՝ որպես

անվտանգության համակարգերի մոնտաժում և նախագծեր իրականացնող կազմակերպություն,

- ✓ հանքաարդյունաբերության ոլորտի հայկական ընկերություններից մեկը համագործակցում է իրանական ընկերության հետ, որը նախատեսում է գնել պղնձի խտանյութ: Իրանական ընկերության ներկայացուցիչներն առաջիկայում կայցելեն Հայաստան՝ տեղում համագործակցության հնարավորությունները քննարկելու համար,
- ✓ հայկական մեկ ընկերություն ստացել է հակակարկտային համակարգերի և անձրևային տեղումները խթանող համակարգերի մշակման 5-6 պատվեր՝ Իրանի տարբեր նահանգներում կիրառելու նպատակով,
- ✓ բանակցություն է տարվում իրանական կազմակերպության հետ՝ կենցաղային կեղտաջրերի մաքրման հայկական արտադրության կայանների ձեռք բերման ուղղությամբ,
- ✓ լոգիստիկայի բնագավառի ընկերություններից մեկը համաժողովի շրջանակներում իրանական բեռնափոխադրող ընկերությունների հետ քննարկել է դեպի Իրան արտահանման հնարավոր խոչընդոտները, Հայաստանը որպես տրանզիտային գոտի օգտագործելու հնարավորությունները, ինչպես նաև Իրանից ներմուծումների պարագայում ընկերության մաքսային տերմինալի հնարավորությունները: Սպասվում է համատեղ բեռնափոխադրումների իրականացման պայմանագրերի կնքում, ԵԱՏՄ և ԵՄ անդամ երկրների բեռների դեպի Իրան տեղափոխման ու դեպի ԵԱՏՄ և ԵՄ անդամ երկրներ արտահանման համար:

- 2015 թ. դեմտեմբերի 10-ին Մոսկվա քաղաքում կայացավ Ռուսաստանի սպառողների իրավունքների պաշտպանության Ազգային միության կողմից կազմակերպված «Ռուսաստանյան սպառողական շուկայի առողջացման միջոցներ» թեմայով խորհրդակցություն:

Խորհրդակցությանը մասնակցում էին ՌԴ Դաշնային Խորհրդի և Պետական Դումայի անդամներ, Դաշնային վերահսկող մարմինների ղեկավարներ, ռեգիոնալ կառավարման մարմինների ներկայացուցիչներ, տարբեր ինստիտուտների և փորձարկման կենտրոնների ներկայացուցիչներ, գործարարներ: Խորհրդակցությանը մասնակցեցին նաև Հայաստանի և Բելառուսի ներկայացուցիչները: Քննարկվել է իրացվող սննդամթերքի նկատմամբ կիրառվող որակի ստանդարտները և վերահսկողության մեխանիզմները:

- 2015թ. դեկտեմբերի 10-ից 11-ը Մոլդովայի Քիշնև քաղաքում կայացել է Զարգացող երկրներից ներկրման խթանման կենտրոնի (CBI) SEEWine ամենամյա համաժողովը՝ գինեգործության ոլորտի զարգացման խնդիրների, աջակցության գործիքների և համատեղ իրականացվող ծրագրերի քննարկման նպատակով:

Համաժողովը կազմակերպվել և ֆինանսավորվել է Զարգացող երկրներից ներկրման խթանման կենտրոնի և «Վայնս ով Մոլդովա» կազմակերպության կողմից: Միջոցառմանը մասնակցում էին Մոլդովայի, Հայաստանի, Վրաստանի և Մակեդոնիայի ներկայացուցիչները:

Համաժողովի ընթացքում քննարկվեցին CBI և Հիմնադրամի համագործակցության ուղիները, ինչպես նաև կնքվեց «Համագործակցության պայմանագիր»՝ Հիմնադրամի և Զարգացող երկրներից ներմուծման խթանման կենտրոնի (CBI) միջև:

2016 թվականին SEEWine ամենամյա համաժողովը նախատեսվում է կազմակերպել Հայաստանում:

- 2015թ. դեկտեմբերի դեկտեմբերի 14-ից 15-ը տեղի ունեցավ առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության հարցերով հայ-բուլղարական միջկառավարական հանձնաժողովի 7-րդ նիստը: Նիստի շրջանակներում կազմակերպված հանդիպումներին քննարկվել են երկկողմ առևտրատնտեսական կապերի ընդլայնման հնարավորությունները:

2) ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑԱԲԵՐՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

ա) Արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում միջոցառման շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Ենթածրագրի շրջանակներում իրականացվում է արտահանման ուղղվածություն ունեցող մշակող արդյունաբերության ոլորտի կազմակերպություններին (կապիտալ ներդրումների իրականացում և շրջանառու միջոցների ձեռքբերում)՝ «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում:

Հաշվետու ժամանակահատվածում Հիմնադրամի կողմից բավարարվել է մշակող արդյունաբերության ոլորտների թվով 16 ընկերության հայտ («Էկո Գարդեն Արտադրական Կորպորացիա», «Տրինիտի», «Մարան», «Գոլդեն Հարվիսթ», «Օվալ Պլաստիկ», «Իշխան», «Ատաստ Ֆուդ», Երևանի «Շամպայն գինիների գործարան», «Իջևանի գինու կոնյակի գործարան», «Բորոդինո», «Ռաֆելգրիգ», «Արարատի գինու գործարան», «Պռոշյանի կոնյակի գործարան», «Շահումյան Վին», «Մեգա Արարատ», «Արմենիա Վայն»), դադարեցվել է 5 ընկերության («Էլեկտրասարք», «Կաշի», «Բոնիլատ», ԱՁ Հակոբ Սեդրակի Զուլումյան, «Հեսփերուս») 6 վարկի սուբսիդավորում:

Բավարարված հայտերի մասով վարկերի ընդհանուր գումարը կազմում է 2,106,925.0 հազար ՀՀ դրամ, իսկ Հիմնադրամի կողմից սուբսիդավորման գումարը 24 ամսվա համար կկազմի շուրջ 103 մլն ՀՀ դրամ:

Ընկերությունների շրջանակներում՝ գործիքի վերաբերյալ իրազեկում ապահովելու և ուղղորդելու նպատակով, Հիմնադրամի կողմից շարունակվել են իրազեկման աշխատանքների իրականացումը: Միաժամանակ, գործիքի վերաբերյալ մանրամասն իրազեկել է 2015 թվականի ապրիլի 26-28-ը կայացած «MADE IN ARMENIA» ցուցահանդեսի ժամանակ՝ գործիքակազմի վերաբերյալ բուկլետների և անհատական քննարկումների միջոցով, ինչպես նար մարզային այցելությունների շրջանակներում:

Իրականացվել է սուբսիդավորված կազմակերպությունների մոտ սուբսիդավորման պայմաններին համապատասխանելը բացահայտելու նպատակով ուսումնասիրություն և նախորդ տարիներին տրամադրված վարկերի սուբսիդավորման սպասարկում:

Նույն ժամանակահատվածում քննարկվել են նաև «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲ ընկերության կողմից տրամադրված վարկերի մոնիթորինգների արդյունքները և դրանց վերաբերյալ սահմանված կարգով ներկայացվել են եզրակացություններ:

Հայաստանի զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի համապատասխան որոշմամբ հաստատվել է վարկերի մասնակի սուբսիդավորման նոր կարգը:

Ենթածրագրի շրջանակներում 2015 թվականին նախատեսված է եղել վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման աջակցություն տրամադրել առնվազն 10 սուբյեկտի:

բ) Արտերկրում սերտիֆիկացման և դեղերի գրանցման համաֆինանսավորում միջոցառման շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Ենթածրագրի շրջանակներում իրականացվում է մշակող արդյունաբերության ոլորտներում արտադրվող ապրանքների համար նույն տարում ստացած սերտիֆիկատների, Հայաստանի Հանրապետությունում կենսահամարժեքության փորձաքննության, Հայաստանի Հանրապետությունում որակի կառավարման համակարգերի ներդրման համար ծախսերի համաֆինանսավորում մինչև՝ 50%-ի չափով, բայց ընդհանուր առմամբ ոչ ավել քան 10,000.0 հազար ՀՀ դրամ մեկ կազմակերպության համար:



Հաշվետու ժամանակահատվածում Հիմնադրամի կողմից բավարարվել է 9 կազմակերպության 13 հայտ («Լիկվոր», «Արեգակ» կոնյակի գործարան, «Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա», «Թերմորեքս», «Արփիմեդ» «Ռիվալ», «Մեդիկալ Հորիզոն», «Գյումրի Գարեջուր», «Երևանի Գարեջուր»): Արդյունքում ընկերությունների համաֆինանսավորման չափը կազմել է շուրջ 26,840.8 հազար ՀՀ դրամ:

Ընկերությունների շրջանակներում՝ գործիքի վերաբերյալ իրազեկում ապահովելու և ուղղորդելու նպատակով, Հիմնադրամի կողմից շարունակվել են իրազեկման աշխատանքների իրականացումը: Միաժամանակ, գործիքի վերաբերյալ մանրամասն իրազեկել է 2015 թվականի ապրիլի 26-28-ը կայացած «MADE IN ARMENIA» ցուցահանդեսի ժամանակ՝ գործիքակազմի վերաբերյալ բուկլետների և անհատական քննարկումների միջոցով, ինչպես նար մարզային այցելությունների շրջանակներում:

Հայաստանի զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի համապատասխան որոշմամբ հաստատվել է սերտիֆիկատների համաֆինանսավորման նոր կարգ:

Ենթածրագրի շրջանակներում 2015 թվականին նախատեսված է եղել աջակցություն տրամադրել առնվազն 12 հայտի համար:

3) ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ, ՀԱՅԿԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ԱՌԱՋՄՂՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ՀԱՅԿԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ա) Արտերկրում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում միջոցառման շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Հաշվետու ժամանակահատվածում «Հայաստանի արտահանման ուղղվածություն ունեցող ոլորտների մրցունակության բարձրացում՝ իրացման արդիականացման և մուտք դեպի շուկա ապահովելով» ծրագրի շրջանակներում՝ UNIDO-ի հետ համատեղ 2015 թվականի մարտի 20-ին կազմակերպվել է 2016 թվականի ձմեռային հավաքածուի ցուցադրություն: Ցուցադրությունը կազմակերպվել է նոր ստեղծված 5900BC բրենդի ներքո:

Միջոցառման նպատակն էր ՌԴ գործարարների հետ նոր կապերի ստեղծումը և համագործակցության հետագա քայլերի քննարկումը՝ ներկայացնելով հայ և իտալացի մասնագետների կողմից մշակված արտադրանքի արտահանման հնարավորությունները:

Ծրագրի իրականացման երկու տարիների արդյունքում ակնկալվում է արտադրական ծավալների աճ շուրջ 1-3 մլն ԱՄՆ դոլարի չափով, ինչպես նաև արտահանման ծավալների աճ շուրջ 40%-ի չափով:

• Հաշվետու ժամանակահատվածում «Հայաստանի արտահանման ուղղվածություն ունեցող ոլորտների մրցունակության բարձրացում՝ իրացման արդիականացման և մուտք դեպի շուկա ապահովելով» ծրագրի շրջանակներում՝ UNIDO-ի հետ համատեղ 2015 թվականի սեպտեմբերի 2-5-ը ՌԴ Մոսկվա քաղաքում կազմակերպվել է «CPM - Collection Premiere Moscow» միջազգային ցուցահանդեսին 5900BC բրենդի արտադրանքի ներկայացումը:

Միջոցառման նպատակն էր համագործակցություն հաստատումը ռուսական շուկայի խոշոր կազմակերպությունների հետ և հետագա քայլերի քննարկումը՝ ներկայացնելով հայ ու իտալացի մասնագետների կողմից մշակված արտադրանքը և արտահանման հնարավորությունները:

Ցուցահանդեսի ընթացքում հանդիպումներ են կայացել և նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել մի շարք հայտնի բրենդերի, մասնավորապես՝ Befree, Zarina, Love Republic (JSC "Melon Fashion Group»), Kira Plastinina (LLC "Kira Plastinina Style»), Incity (JSC "Fashion Continent»), Baom (Holding "Baon»), Jeanswear retail stores chain"5 Pockets", Brand "Didier Parakian", Wholesale Company "Hartwear" ընկերությունների ներկայացուցիչների հետ:

Ներկայումս ընթանում են վերջնական բանակցություններ գնային քաղաքականության և հնարավոր արտադրական հզորությունների հետ կապված՝ Metro Cash&Carry, Lady & gentleman CITY առևտրային ցանցերի, ինչպես նաև INCITY և Melon Fashion Group ընկերությունների ներկայացուցիչների հետ 5900BC բրենդի մոտ 30 հազ հատ մոդելի արտահանման շուրջ: Նախնական գնահատականով նախատեսվող պայմանագրերի արժեքը ընդհանուր առմամբ կկազմի մոտ 480.000 ԱՄՆ դոլար:

• «Հայաստանի Գինիներ» հովանոցային բրենդի հիմնման և համապատասխան կառույցի ստեղծման նպատակով իրականացվել է մասնագիտական խորհրդատվության ծրագիր՝ համագործակցելով GIZ-ի հետ: 2015թ. հուլիսի 22-24-ը նիդերլանդացի փորձագետ

Մարկո Տիգելմանի կողմից առաջին այցն է իրականացվել՝ ոլորտի ուսումնասիրման նպատակով: Այցի ընթացքում հանդիպումներ են կազմակերպվել ՀՀ ստանդարտների Ազգային Ինստիտուտի, «Տոնուս-Լես» լաբորատորիայի և թվով 8 գինեգործական ընկերությունների հետ (Արենիի գինու գործարան, Մարան, Հին Արենի, Գոլդեն Գրեպս Արմաս, Արմենիա Վայն, Վան-777, Վայն Հաուս, Սեմինա Քոնսալթինգ):

2015թ. սեպտեմբերի 22-24-ը նիդերլանդացի փորձագետի կողմից երկրորդ այցն է իրականացվել: Ներկայացվել է առաջարկվող բրենդի ինստիտուցիոնալ մոտեցումները, համատեղ աշխատանքներ են տարվել բրենդի ստեղծման և կառավարման կառույցի կառուցվածքի ու գործիքակազմի քննարկման վերաբերյալ: Վերջնական հաշվետվության ներկայացման համար 2015 թվականի նոյեմբեր ամսին նախատեսված երրորդ այցը կիրականցվի 2016 թվականի 1-ին եռամսյակում:

- 2015 թվականի միջոցառումների շրջանակներում նախատեսված «Գինու աշխարհ» խորագրով շաբաթական հեռուստահաղորդումների շարքի նախագծի իրականացման նպատակով 2015թ. օգոստոսի 7-ին հայտարարվել էր մրցույթ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված պահանջներին համապատասխան:

«Գինու աշխարհ» խորագրով հեռուստահաղորդումների հաղորդաշարը կրում է ուսումնական-դաստիարակչական բնույթ և իրենից ներկայացնում է 20 րոպե տևողությամբ 4 հաղորդում մեկ ամսվա ընթացքում:

Մրցույթի արդյունքում հայտ է ներկայացրել մեկ մասնակից-ընկերություն, որը չէր բավարարում տեխնիկական բնութագրի պահանջներին և արդյունքում մրցույթը հայտարարվել է չկայացած:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաղորդաշարը իր բնույթով նախատեսում է իրականացնել նկարահանումներ խաղողի այգիներում, բերքահավաքի ընթացքում և այլն, նպատակահարմար է գտնվել մրցույթը կրկին հայտարարել 2016թ. ապրիլ-մայիս ամիսներին՝ նկարահանումները հունիս-օգոստոս ամիսների ընթացքում անցկացնելու նպատակով:

- Հիմնադրամի հրավերով հոկտեմբերի 1-5-ը Հայաստան են այցելել գինեգործության ոլորտի ազդեցիկ 6 փորձագետներ՝ Դանիայից, Իտալիայից, Բուլղարիայից, Նիդեռլանդներից, Գերմանիայից և Ռուսաստանից: Փորձագետների այցը կազմակերպվել է «Արենի» գինու փառատոնին ընդառաջ՝ նպատակ ունենալով աշխարհում բարձրացնել Հայաստանի որպես գինեգործական հնամենի ավանդույթներ և հարուստ պոտենցիալ ունեցող երկրի ճանաչելիությունը և խթանել գինու արտահանումը: Փորձագետները

ծանոթացել են գինու արտադրության հայկական մշակույթին և տեսականուն, այցելել են նաև մոտ մեկ տասնյակ գինեգործական ընկերություններ և խաղողի այգիներ, ծանոթացել են հայկական խոհանոցի ավանդույթներին, մասնակցել գինու համտեսների:

Այցի արդյունքում մի շարք միջազգային մասնագիտացված լրագրերում և ամսագրերում հայկական գինեգործության ոլորտի վերաբերյալ հրապարակում են հոդվածներ, ինչը խթան կհանդիսանա հայկական գինիների միջազգային ճանաչելիության բարձրացման (6 հոդված արդեն իսկ հրապարակվել է):

- ✓ http://rus-sommelier.ru/5-stiley-sovremennogo-vinodeliya-armen/
- ✓ http://www.alcoexpert.ru/club-vinotravel/27709-vinodelie-armenii-foto.html
- ✓ http://www.slowfood.it/slowine/armenia-la-misteriosa-patria-del-vino/
- ✓ http://www.lavinium.com/mondovino/dicova_armenia_arcaica_patria_del_vino_dall_antichita_al_giorno_d_oggi_2015.shtml
- ✓ http://issuu.com/developmentfoundationofarmenia/docs/armenia_proefschrift_28.5?e=20404595/31718978
- ✓ http://www.b.dk/mad/verdens-aeldste-vineri-er-6100-aar

• 2015 թվականի հոկտեմբերի 13-15-ը Իսպանիայի Մադրիդ քաղաքում կայացավ «CPhI Worldwide» 2015 միջազգային դեղագործական ցուցահանդեսը: Ցուցահանդեսը հանդիսանում է դեղագործության բնագավառում մեծ ճանաչում ունեցող ամենամյա միջոցառումներից մեկը, որի հիմնական այցելուներն են հանդիսանում տվյալ ոլորտի առևտրային դիստրիբյուտորները: Ցուցահանդեսին ներկայացված էին դեղագործության բազմաթիվ ենթաոլորտներ, սակայն հիմնական շեշտադրումը դրված է դեղագործական հումքի, վերջնական արտադրանքի /ջեներիկ դեղերի/, սարքավորումների և փաթեթավորման վրա:

Ցուցահանդեսին տարեկան մասնակցում են շուրջ 2500 դեղագործական կազմակերպություններ՝ ավելի քան 150 երկրներից, իսկ այցելուների թիվը կազմում է շուրջ 35 հազ. մարդ:

Միջոցառմանը Հիմնադրամը մասնակցեց մեկ միասնական «հայկական» տաղավարի ձևաչափով՝ ներկայացնելով «Լիկվոր», «Արփիմեդ», «Տոնուս Լես» և «Դարման Թեսթ Լաբորատորիս» ընկերություններին: Միջոցառմանը մասնակցության հիմնական նպատակը ոլորտի և հայկական արտադրանքի ճանաչելիության բարձրացումն է, եվրոպական շուկա մուտք գործելը և նոր գործընկերներ ձեռք բերելը:

Միջոցառման ընթացքում Հիմնադրամի կողմից ներկայացվեց Հայաստանի դեղագործության ոլորտը /ոլորտի զարգացման հիմնական միտումները, ներդրումային և գործարարության իրականացման առավելություններն ու հնարավորությունները, գործող հիմնական ընկերությունների զարգացման ներուժը/, այդ թվում «Լիկվոր» և «Արփիմեդ» ընկերություններին, որոնք ստացել են ՊԱԳ հավաստագիր և ունեն արտահանման հնարավորություններ դեպի Եվրոպական և այլ զարգացած շուկաներ, «Դարման Թեսթ Լաբորատորիս» ու «Տոնուս Լես» միջազգային հավատարմագրում ստացած լաբորատորիաներին:

Հանդիպումներ կայացան շուրջ 100 հնարավոր գնորդ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որի արդյունքում ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ, մասնավորապես՝

- ✓ «Լիկվոր» ընկերությունը բանակցային աշխատանքներ է իրականացնում թվով 12 դեղագործական դիստրիբյուտորների հետ:

  Ուկրաինական «Բիո Սայենս» ընկերության հետ բանակցությունները գտնվում են ավարտական փուլում և առաջիկայում նախատեսվում է պայմանագրերի կնքում՝ ուկրաինական կողմից պատվերով վերջնական արտադրանքի արտադրության նպատակով,

- ✓ «Արփիմեդ» ընկերությունը բանակցություններ է վարում հնդկական «Իդեալ Սյուրս» և իսպանական «Թևա ֆարմասյութիքլս» դեղագործական ընկերությունների հետ՝ դեղագործական հումքի ձեռք բերման ուղղությամբ:
- ✓ «Տոնուս-Լես» ընկերությունը աշխատանքներ է իրականացնում թվով 5 հնարավոր գործընկերների հետ, մասնավորապես, «Ատրալ Ցիփան», «Օսմոֆարմ» և «Քլոք ֆարմա Սերվիս» ընկերությունների հետ: «Ատրալ Ցիփան»-ը առաջարկում է պատրաստի դեղորայք, որոնց համար «Տոնուս-Լես»-ը կարող է հանդիսանալ դիստրիբյուտոր, իսկ մյուս երկուսը պայմանագրային հիմունքներով դեղ արտադրողներ են, որոնք կարող են օգտվել «Տոնուս-Լես» ընկերության լաբորատոր և կլինիկական ծառայություններից՝ այդ թվում կենսահամարժեքության հետազոտության մասով: «Օսմոֆարմ» ընկերության հետ արդեն կա նախնական մշակված պայմանագիր: 2016թ-ին կանխատեսվում է կնքել պայմանագիր նաև «Ատրալ Ցիփան» ընկերության հետ: Միջոցառման ընթացքում նաև կապ է հաստատվել և նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել մի շարք ընկերությունների հետ լաբորատոր ծառայությունների անհրաժեշտության դեպքում համագործակցելու համար:

- 2015 թվականի հոկտեմբերի 9-ից 11-ը Երևանում /Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում/ անցկացվեց Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 31-րդ նախարարական համաժողովը /պատվիրակություններ կազմակերպության անդամ և դիտորդ 80 պետություններից շուրջ 450 ներկայացուցիչ/, որին կից Հիմնադրամի աջակցությամբ կազմակերպվեց հայկական ապրանքների ցուցահանդես:

Ցուցահանդեսին մասնակցեցին 14 հայկական ընկերություններ՝ ոսկերչության, դեղագործության, թեթև արդյունաբերության, սննդարդյունաբերության, կոնյակագործության, արհեստագործության և տեղեկատվական տեխնոլոգիաների

ոլորտներից: Միջոցառմանը մասնակցության հիմնական նպատակը հայկական արտադրանքի ճանաչելիության բարձրացումն էր:

• Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, ք. Լոնդոնում նոյեմբերի 1-ին կազմակերպվել է Հայաստանին նվիրված միջոցառում, որն ուղեկցվել է հայկական մշակույթի և խոհանոցի շնորհանդեսով, որի հատուկ մաս է կազմել գինու համտեսը: Միջոցառմանը մասնակցել են լրագրողներ, գինու փորձագետներ և սոմելիեներ՝ շուրջ 350 անձ:

• Հիմնադրամի կողմից 2015 թվականի նոյեմբերի 5-ին Լեհաստանի Հանրապետության Կրակով քաղաքում կազմակերպվել է հայկական գինիների համտես–շնորհանդես՝ լեհական շուկայում հայկական գինիների ճանաչելիության բարձրացման և առաջմղման նպատակով: Համտեսին ներկայացված էին «ENOEXPO 2015» 13-րդ միջազգային ամենամյա գինու ցուցահանդեսի մասնակից թվով 14 հայկական ընկերությունների արտադրատեսակները՝ գինի, կոնյակ, ծիրանի բրենդի և գարեջուր:

Միջոցառման ընթացքում ներկայացվել է Հայաստանի, հայկական գինեգործության ավանդույթների և պատմական ակունքների, ոլորտի ներկայիս իրավիճակի և

զարգացումների վերաբերյալ շնորհանդեսային նյութ: Ընկերությունների կողմից ներկայացվել է համտեսվող գինու և կազմակերպության վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն: Միջոցառումը ուղեկցվել է հայկական խոհանոցի հյուրասիրությամբ:



Հրավիրյալների ցանկում էին (33 անձ) առևտրային ցանցերի, գինու ներմուծմամբ և վաճառքով զբաղվող ընկերությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև տվյալ ոլորտի լրագրողներ և սոմելիեներ: Վերջիններս միջոցառման ավարտից հետո ներկայացրել են իրենց տպավորությունները և կարծիքները՝ համտեսվող արտադրատեսակների վերաբերյալ:

Միջոցառումների ավարտից հետո հայկական և լեհական տարբեր մասնագիտացված կայքերում, բլոգերում և ամսագրերում լույս են տեսել հայկական գինեգործության, մասնակից ընկերությունների և արտադրատեսակների վերաբերյալ հոդվածներ, մասնավորապես.

- ✓ http://blurppp.com/blog/armenia-na-enoexpo-2015/
- ✓ http://blog.czajkus.com/2015/11/15/targi-enoexpo-2015-r/
- ✓ http://wtangozwinem.blog.pl/2015/11/18/argentynczyk-w-armenii-gabriel-rogel-karas/
- ✓ https://www.youtube.com/watch?v=MWyMYGPQzRA&feature=youtu.be
- ✓ http://novostink.ru/mir/129061-armyanskoe-vino-konyak-pivo-i-abrikosovyy-brendi-pokoryayut-mezhdunarodnyy-rynok.html
- ✓ http://www.panorama.am/am/news/2015/11/04/dfa-krakov/1474319#.Vjzar5Vc_wk.facebook

- ✓ http://news.am/arm/news/294370.html
- ✓ http://www.banks.am/am/news/newsfeed/11443/
- ✓ http://henaran.am/153246.html
- ✓ https://www.facebook.com/TInExArm/

• ՀՀ տեքստիլ, տրիկոտաժի, կաշվի, կաշվի իրերի և կոշիկի ոլորտների արտադրողների, տեսականու և հնարավորությունների ներկայացման, ինչպես նաև մեկ հարթակում արտադրողների և հնարավոր գործընկերների շփման համար ժամանակակից գործիք ունենալու նպատակով մշակվել և քննարկման փուլում է գտնվում ՀՀ թեթև արդյունաբերության պորտալի ստեղծման համար ՀՀ թեթև արդյունաբերողների միությանը դրամաշնորհ հատկացնելու վերաբերյալ պայմանագրի նախագիծը:

• ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ Հիմնադրամի, «ՓՄՁ ԶԱԿ»-ի, «ՓՄՁ Ներդրումներ» ՈՒՎԿ-ի և «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալության» ներկայացուցիչներից, որն իրականացրել է մարզային այցեր և հանդիպումներ՝ գործարարների շրջանակներում պետական աջակցության գործիքակազմի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով:

• «Euromonitor International» համակարգը հանդիսանում է միջազգային խոշորագույն տեղեկատվական վճարովի բազաներից մեկը: Հիմնադրամի կողմից Passport համակարգից վերհանվել են սննդարդյունաբերության, ոսկերչության, թեթև արդյունաբերության, դեղագործության և խմիչքների արտադրության և այլ ոլորտների մասով թիրախային շուկաների մասնակիցների վերաբերյալ տեղեկատվությունը և այն անվճար տրամադրվել է հայկական ընկերություններին:

բ) Միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովում միջոցառման շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները.

• **«World Money Fair», Գերմանիայի Դաշնություն, ք. Բեռլին, 2015 թ. հունվարի 30-ից փետրվարի 1-ը** ամենամյա տոնավաճառ-ցուցահանդեսին ներկա է եղել շուրջ 330 մասնակից և 15 հազ այցելու: Ցուցահանդեսին մասնակցել է նաև Երևանի Ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն ներկայացնելով՝ հուշամեդալներ, մեդալներ, կրծքանշաններ, շքանշանների, կոլեկցիոն հավաքածուներ:

Ցուցահանդեսի ժամանակ ձեռք են բերվել հետևյալ պայմանավորվածություններ՝

- ✓ Բելառուսի Հանրապետության Կենտրոնական Բանկի հետ՝ ընկերության մասնակցությունը Բանկի կողմից հայտարարվող մրցույթներին դիտարկելու ուղղությամբ:
- ✓ Էստոնիայի Հանրապետության Montero Invest ընկերության ներկայացուցիչների կողմից առաջարկվել է կատարել փորձնական պատվեր մոտ 10 հազ հատ արծաթյա հուշադրամներ արտադրելու վերաբերյալ: Ներկայումս ուսումնասիրվում է պատվիրատուի կողմից տրամադրվող արծաթյա սալիկների հարկման խնդիրը հումքի ներմուծման ժամանակ:
- ✓ ԱՄՆ-ի ART of CRAFT-ի ներկայացուցիչների հետ՝ հուշադրամների և հուշամեդալների վաճառքի խանութների ցանց բացելու մասին:

- **SPIE Photonics West 2015, ԱՄՆ, ք. Սան Ֆրանցիսկո, 2015 թ. փետրվարի 10-12-ին** ցուցահանդեսին մասնակցել են ավելի քան 1250 արտադրողներ, իսկ այցելուների քանակը՝ 21 հազ: Ցուցահանդեսին կազմակերպվել է ճշգրիտ ճարտարագիտության ոլորտի հայկական թվով 2 ընկերությունների մասնակցություն («Աստրա Կրիստալս» և «ԼՏ Պիրկալ»):

SPIE. PHOTONICS WEST

- ✓ «ԼՏ Պիրկալ» – ընկերության արտադրանքն ուսումնասիրել են մոտ 700 այցելու, որոնցից բանակցություններ են վարվել շուրջ 45 կազմակերպության ներկայացուցիչների հետ: Երեք ընկերությունից արդեն ստացվել է մոտ 300.000 ԱՄՆ դոլարի պատվերներ:
- ✓ «Աստրա Կրիստալս» - ընկերությունը ունեցել է անհատական հանդիպումներ թվով 17 հնարավոր գնորդ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ (ԱՄՆ, Չինաստան, Գերմանիա և Իսրայել): Իսրայելական խոշոր ընկերություններից մեկը՝ Միլիտրամը (Militram Futuristic Technologies, Israel) ցանկություն էր հայտնել դառնալ «Աստրա Կրիստալս» ընկերության էքսկլյուզիվ ներկայացուցիչը Իսրայելում:

- **PRODEXPO 2015, ՌԴ, ք. Մոսկվա, 2015 թ. փետրվարի 9-13-ին** ցուցահանդեսին ներկայացված են եղել 65 երկրների շուրջ 2000 ներկայացուցիչ, ցուցահանդես այցելել են մոտ 55 հազ մարդ: Միջոցառմանը կազմակերպվել է հայկական թվով 22 ընկերությունների մասնակցություն:

Մասնավորապես, հայ արտադրողները հանդիպել են ընդհանուր առմամբ շուրջ 250 հնարավոր գնորդների հետ, այդ թվում X5, Ազբուկա Վկուսա, Կարոնա և այլ հանրաճանաչ առևտրային ցանցերից: Ընկերությունների կողմից բանակցություններ են տարվել, որի արդյունքում կանխատեսվել է կնքել շուրջ 20-25 պայմանագրեր: Մեկ կազմակերպության ղեկավար արդեն իսկ այցելել է հայկական երկու ընկերություններ և քննարկել հնարավոր համագործակցության շրջանակները: Միաժամանակ, պահածո արտադրող չորս և մրգային օղի արտադրող մեկ հայկական ընկերություններ մասնակցել են միջազգային՝ «Լավագույն արտադրանք 2015» և «Լավագույն ինովացիոն արտադրանք» մրցույթին և տարբեր նոմինացիաներում արժանացել մրցանակների (6 ոսկի, 2 արծաթ), ինչը ևս կնպաստի նոր գործընկերների բացահայտմանը և արտահանմանը դեպի ՌԴ շուկա:

Ստացված տեղեկատվության համաձայն նախատեսվել է արտահանման ծավալների աճ, մասնավորապես, խոշոր ընկերությունների մոտ 7-10%, իսկ փոքր ընկերությունների մոտ մինչև 35-40%:

- **«ProWein», Գերմանիա, ք. Դյուսելդորֆ, 2015 թ. մարտի 15-17-ին կայացած** ցուցահանդեսը հանդիսանում է ԵՄ առաջատար և աշխարհի հանրաճանաչ ցուցահանդեսներից մեկը, որտեղ ներկայացված են շուրջ 6000 մասնակիցներ ավելի քան 50 երկրներից և 52 հազ այցելուներ:

Ցուցահանդեսին կազմակերպվել է գինեգործության ոլորտի հայկական թվով 5 ընկերությունների մասնակցություն («Մարան», «Էդվագ Գրուպ», «Անուշ-1», «Արմենիա Վայն» և Երևանի «Շամպայն Գինիների գործարան»):

Հայկական ընկերությունները հանդիպումներ են ունեցել շուրջ 75-80 փոքր և միջին գնորդների, ինչպես նաև ռեստորանային գործունեությամբ զբաղվող անձանց հետ: Վերջիններիս հետ էլ. փոստի միջոցով շարունակվել են աշխատանքները:

- **«ԱՌՈՒ» 24-րդ միջազգային ոսկերչական ցուցահանդես-վաճառքը կայացել է 2015 թվականի ապրիլի 9-12-ը** Ղազախստանի Հանրապետության Ալմա Աթա քաղաքում, որին մասնակցել են 110 կազմակերպություն 8 երկրից, իսկ ցուցահանդես այցելել են շուրջ 13 հազ մարդ: Ցուցահանդեսին ներկայացվել են «Դե Լաուր», «Ես Սիլվեր», ԵՈԳ-1 «Գնոմոն» ընկերությունները, ինչպես նաև «Գևորգ Կիրակոսյան» և «Արշավիր Դավթյան» ԱՁ-ները:

  - ✓ Ամփոփելով ցուցահանդեսի արդյունքները, ինչպես նաև ուսումնասիրելով Ղազախստանի շուկան «Դե Լաուր» ընկերությունը իրականացնում է աշխատանքներ՝ խանութ-սրահի բացման ուղղությամբ (ձեռք է բերվել համապատասխան տարածք, իրականացվել է վերանորոգում),

- ✓ «Ես Սիլվեր» ընկերությունը պայմանավորվածություն է ձերք բերել «Ղազախյուվելիր» ընկերության հետ մենաշնորհային վաճառքի:
- ✓ ԵՈԳ-1 «Գնոմոն» ԲԲ ընկերությունները կնքել է պայմանագիր խանութների ցանցի հետ՝ ժամացույցների և ոսկյա զարդերի վաճառքի նպատակով: Առաջիկայում կարտահանվի երկրորդ ապրանքախումբը:

- **2015 թվականի մայիսի 13-15-ը** Հնկաստանի Մումբայ քաղաքում կայացավ IPHEX **(Indian Pharmaceutical and Healthcare Expo)** խոշորագույն դեղագործական ցուցահանդեսը, որտեղ ներակայացված են շուրջ 250 արտադրողներ, իսկ այցելուների քանակը՝ ավելի քան 19 հազ: Ցուցահանդեսին՝ Հայաստանում Հնդկաստանի Հանրապետության դեսպանատան և Հիմնադրամի համագործակցության շրջանակներում մասնակցեցին նաև հայկական դեղագործական ընկերությունները: Մասնակիցների կողմից ներկայացվեց սեփական արտադրանքը, զարգացման հնարավորությունները և հետագա հնարավոր համագործակցությունը:

Ցուցահանդեսին մասնակցել են հայկական դեղ արտադրող և ներմուծող ընկերությունները («Արփիմեդ», «Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա», «Բիո-Քիմ», «Մեդիկալ Հորիզոն», «Նատալի Ֆարմ», «Ալֆա-Ֆարմ», «Վագա Ֆարմ», «Ամիկուս», «Արմենֆարմ»), ինչպես նաև Դեղ արտադրողների և ներմուծողների (ԴԱՆ) միությունը:

- 2015 թվականի հունիսի 5-8-ը Երևանում՝ Նկարիչների միության պատկերասրահում կայացել **է «Ոսկեգործություն 2015» 12-րդ միջազգային ոսկերչական ցուցահանդես-վաճառք**, ինչպես նաև ֆորում՝ «Ոսկեգործություն 2015», որի կազմակերպիչն է հանդիսանում Հայաստանի ոսկեգործների և ադամանդ արտադրողների միությունը: Հիմնադրամի աջակցությամբ ցուցահանդեսին մասնակցեցին 13 ոսկերչական ընկերություններ: Կազմակերպված ֆորումին ՌԴ-ից հրավիրվել էին ԵՏՄ-ի ներկայացուցիչները, որոնք պարզաբանումներ են տվել ոլորտի ներկայացուցիչների հուզող հարցերին:

• **«Экспокамень 2015», ՌԴ, ք. Մոսկվա, 2015թ. հունիսի 16-19-ին** կայացած ցուցահանդեսին մասնակցել են շուրջ 345 մասնակիցներ 20 երկրներից, իսկ այցելուների քանակը կազմել է 7000-ից ավելի մարդ:

Ցուցահանդեսին կազմակերպվել է քարի արտադրության ոլորտի թվով չորս ընկերությունների մասնակցություն («Մանանա Գրեյն», «Էյչ Էմ Թայլս», «Աստղային քար» և «Օրիենթ Սթոն»): Ըստ աշխատանքային կարգով ձեռք բերված տեղեկատվության ընկերությունները հանդիպումներ են ունեցել շուրջ 80-90 պոտենցիալ գնորդների հետ, որոնցից մոտ 10-15 հետ շարունակվել են բանակցությունները:

• **«World food Moscow 2015», Մոսկվա, 2015 թ. սեպտեմբերի 14-17-ին կայացած** ցուցահանդեսը հանդիսանում է սննդարդյունաբերության բնագավառի ՌԴ-ում մեծ ճանաչում ունեցող միջոցառումներից մեկը, որի հիմնական այցելուներն էին տվյալ շուկայում առևտրային դիստրիբյուտորներ, սննդարդյունաբերության ոլորտում միջին և խոշոր գնորդներ, այդ թվում՝ տարբեր առևտրային ցանցերից, ինչպես նաև վերոնշյալ արտադրատեսակների ներմուծողներ:

Ցուցահանդեսին տարեկան մասնակցում են շուրջ 1700 կազմակերպություններ՝ ավելի քան 70 երկրներից, իսկ այցելուների թիվը կազմում է 30 հազ. մարդ:

Ցուցահանդեսին կազմակերպվել է 10 հայկական սննդաարդյունաբերության ոլորտի ընկերությունների մասնակցություն՝ մեկ միասնական «հայկական» տաղավարի ձևաչափով («Երևանի Գարեջուր», «Դիկոնդ», «Ատաստ Ֆուդ», «Սիս Նատուրալ», «ՎՎՎ Գրուպ», «Ռագ Մակ», «Դուստր Մարիաննա», «Աշտարակ Կաթ», «Նատֆուդ», «Մուշ»):

Հայ արտադրողները հանդիպել են ընդհանուր առմամբ շուրջ 220 հնարավոր գնորդների հետ, այդ թվում՝ Աշան, Ֆամիլիա, X5, Տիխիյ Դոն, Կարոնա, Տրի Կիտա և այլ հանրաճանաչ առևտրային ցանցերից: Ցուցահանդեսի ընթացքում ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ և հետագա համագործակցության համաձայնություններ ինչպես ռուսական այնպես էլ այլ երկրներից ընկերությունների հետ /Լատվիա, Իրան, Բահրեյն, Եգիպտոս և այլն/:

Ներկայումս, ընկերությունների կողմից բանակցություններ են տարվում, որի արդյունքում կանխատեսվում է կնքել շուրջ 10-15 պայմանագրեր, մասնավորապես՝

- ✓ «Երևանի Գարեջուր» ընկերությունն ունեցել է անհատական հանդիպումներ թվով 15 հնարավոր գնորդ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ (ՌԴ, Լիտվա, Ուկրաինա և այլն), որոնց հետ ներկայումս քննարկվում են համագործակցության հնարավորությունները:

  Արդեն իսկ կնքվել են 3 պայմանագիր ռուսական «Սմարթ Դիսթրիբյուշն» (ք. Բլագովեշենսկ), «Ստիմուլ ՍՊԸ» (ք. Նովոսիբիրսկ) և «Տրի Կիտա» ցանցային սուպերմարկետ (ք. Վլադիվոստոկ, ք. Խաբարովսկ):
- ✓ «ՎՎՎ Գրուպ» ընկերությունը հանդիպումներ է ունեցել թվով 40 հնարավոր գնորդ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ (ՌԴ, Բելառուս, Եգիպտոս և այլն): Արդեն իսկ կնքվել է դեպի ՌԴ արտահանման 97 մլն ՀՀ դրամի 3 պայմանագիր: Ներկայումս ընկերությունը բանակցային փուլում է շուրջ 5 ռուսական, բելառուսական և կիրգիզական ընկերությունների հետ:
- ✓ «Նատֆուդ» ընկերությունը բանակցություններ է վարել շուրջ 80 հնարավոր գնորդների հետ (ՌԴ, Բելառուս, Բահրեյն, Իրան և այլն), որոնց հետ ներկայումս

քննարկվում են համագործակցության հնարավորությունները: Ռուսաստանյան 2 առևտրային ցանցերի հետ բանակցությունները ավարտական փուլում են և առաջիկայում նախատեսվում է պայմանագրերի կնքում:

- ✓ «Դիկոնդ» ընկերությունը բանակցություններ է վարում Ռուսաստանյան «Էքսկլյուզիվ» և բելառուսական «Պարադիզ Սթոն» ընկերությունների հետ, որոնք գտնվում են ավարտական փուլում:
- ✓ «Դուստր Մարիաննա» ընկերությունը հանդիպումներ է ունեցել 6 հնարավոր գնորդ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ (ՌԴ, Թուրքմենիա և այլն): Ռուսաստանյան «Ռեսպեկտ» Գրուպ-ի, «Միմ» ՍՊԸ-ի, «Դալիմո» ՍՊԸ-ի, և թուրքմենական «Կամիլ Մարկետ» սուպերմարկետների ցանցի հետ բանակցությունները ավարտական փուլում են գտնվում և առաջիկայում նախատեսվում է պայմանագրերի կնքում:
- ✓ «Ատաստ Ֆուդ» ընկերությունը բանակցություններ է ունեցել թվով 15 հնարավոր գնորդ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայումս 4 ռուսաստանյան ընկերությունների և ցանցերի հետ քննարկվում են համագործակցության հնարավորությունները: Ցանցերից մի քանիսին արդեն ուղարկվել են ընկերության արտադրատեսակների նմուշներ:
- ✓ «Սիս Նատուրալ» ընկերության կողմից 5 ռուսաստանյան ընկերությունների հետ արդեն կնքել է 44 մլն ՀՀ դրամի պայմանագրեր:

Միաժամանակ, պահածո, կաթնամթերք և մսամթերք արտադրող մեկական հայկական ընկերություններ մասնակցել են միջազգային՝ «Տարվա լավագույն արտադրանք 2015» մրցույթին և տարբեր նոմինացիաներում արժանացել մրցանակների՝ 2 ոսկյա, 5 արծաթե և 4 բրոնզե մեդալների և դիպլոմների, որոնք ևս կնպաստեն արտադրանքի խթանմանը տվյալ շուկայում:

- **«Текстильлегпром 2015», ՌԴ, ք. Մոսկվա, 2015թ. սեպտեմբերի 22-25-ին** կայացած ցուցահանդեսին մասնակցել են մոտ 2500 կազմակերպություն 42 երկրներից, միջոցառմանը այցելել են 30 հազ մարդ: Միջոցառմանը կազմակերպվել է թեթև արդյունաբերության ոլորտի հինգ ընկերությունների՝ «Արմտեքս Գրուպ», «Լենտեքս», «Սաթենկար», «Սարտոն», «Արշալույս» մասնակցությունը: Ըստ աշխատանքային կարգով ձեռք բերված տեղեկատվության ընկերությունները հանդիպումներ են ունեցել շուրջ 50-60 պոտենցիալ գնորդների հետ, որոնցից մոտ 10-12-ի հետ առաջիկայում կշարունակվեն բանակցությունները:

Մասնավորապես.

- ✓ «Լենտեքս» ընկերության արտադրանքն ուսումնասիրել են մոտ 300 այցելու, որոնցից բանակցություններ են վարվել շուրջ 15 կազմակերպության ներկայացուցիչների հետ: ՌԴ Մոսկվա քաղաքում ցուցահանդեսի ավարտից հետո հիմնել է ֆիրմային խանութ իր բրենդերից մեկի անունով՝ ООО "Данни", որտեղ մշտապես կվաճառվեն ընկերության արտադրատեսակները: Կնքել է նաև արտահանման պայմանագրեր ռուսական MODIS առևտրային ցանցի, "МЕТКОМПЛЕКТ" և "ОМЕГА" ընկերությունների հետ համապատասխանաբար 50.000 ԱՄՆ դոլար, 100.000 ԱՄՆ դոլար և 35.000 ԱՄՆ դոլար արժողությամբ: Ներկայումս շարունակվում են բանակցությունները պայմանագրերի կնքման ուղղությամբ՝ ռուսական ТД "А и Радуга", "Идеал Маркет", "Атлант" և "Мегаторг" ընկերությունների հետ:
- ✓ «Արշալույս» ընկերությունը ունեցել է անհատական հանդիպումներ թվով 4 հնարավոր գնորդ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ (ՌԴ, Բելառուս), որոնց հետ ներկայումս քննարկվում են համագործակցության

հնարավորությունները: Մեկ ընկերության հետ արդեն իսկ կնքվել է ՌԴ արտահանման պայմանագիր 10.000 ԱՄՆ դոլար արժողությամբ: Ընկերությունը առաջիկայում նախատեսում է կնքել արտահանման պայմանագիր Fix-Price առևտրային ցանցերի հետ: Բանակցությունները վերջնական փուլում են: Պայմանագրի նախատեսվող արժեքն է մոտ 40.000 ԱՄՆ դոլար:

- ✓ «Սաթենկար» ընկերությունը ունեցել է անհատական հանդիպումներ շուրջ 30 գնորդ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որոնցից 10-ի հետ աշխատանքները դեռ շարունակվում են:
- ✓ «Սարտոն» ընկերությունը Հայաստանում արտապատվիրման սկզբունքով գործող և երկարաժամկետ ու մեծածավալ պատվերներ իրականացնող ամենախոշոր կազմակերպություններից է, որը նախատեսում է 2016 թվականից վերսկսել սեփական արտադրանքի թողարկումը: Ներկայումս իրականացվում են աշխատանքներ այդ ուղղությամբ, մասնավորապես ընդլայնվում է բանվորական անձնակազմի թիվը: Միաժամանակ, ցուցահանդեսի ընթացքում ընկերությունը ի թիվս հնարավոր գնորդ կազմակերպությունների հետ հանդիպումների և բանակցությունների, կոնկրետ համաձայնություն է ձեռք բերել Չինաստանից բաճկոնների կտորի, Ռուսաստանից՝ բմբուլի և Թուրքիայից շղթաների ներկրման հետ կապված՝ սեփական արտադրանքի արտադրությունը վերսկսելու նպատակով, ինչի արդյունքում կմեկնարկի նաև սեփական արտադրանքի արտահանման գործընթացը:

- ✓ «Արմտեքս Գրուպ» - ընկերությունը ունեցել է շուրջ 20-30 այցելուներ, որոնց հետ վարվել են նախնական բանակցություններ:

• **«JUNWEX» 2015 Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա՝** սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 4-ը կայացած միջազգային մասնագիտացված ոսկերչական ցուցահանդես-վաճառքը միջոցառմանը ներկայացված են եղել ավելի քան 600 կազմակերպություններ, իսկ այցելուների քանակը կազմել է 25 հազ մարդ:



Ցուցահանդեսը հանդիսանում է ոսկեգործության բնագավառում մեծ ճանաչում ունեցող միջոցառումներից մեկը, որի հիմնական այցելուներն են տվյալ շուկայում առևտրային դիստրիբյուտորներ, ոսկեգործության ոլորտում խոշոր և միջին գնորդներ, այդ թվում տարբեր առևտրային ցանցերի ներկայացուցիչներ, ինչպես նաև ոսկերչական զարդերի, հարակից պարագաների, թանկարժեք քարերի ներմուծողներ:

Ցուցահանդեսին մասնակցելու նպատակով աջակցություն է ցուցաբերվել հայկական 3 ընկերություններին («Առևտրի Տուն ՏԿ», «Ես Սիլվեր» և «Շաբեր»), որոնք ներկայացրել են ոսկերչական զարդեր, արծաթյա սպասք, մշակված թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, ոսկերչական գործիքներ: Արդյունքում բանակցություններ են վարվել շուրջ 20 հնարավոր գործընկերների հետ և ակնկալվում է 2-3 պայմանագրերի կնքում, մասնավորապես.

- ✓ «Ես Սիլվեր» ընկերությունը բանակցել է ՌԴ մի շարք դիստրիբյուտորների հետ և ձեռք է բերվել բանավոր պայմանավորվածություններ՝ խոշոր առևտրային ցանցերում արտադրանքի ներկայացման համար:

  Առաջարկ է ստացվել «Ararat Park Hyatt» հյուրանոցային ցանցի մարկետինգի ղեկավարի կողմից՝ մշտապես ներկայացված լինել հյուրանոցում գործող խանութներում և սպասասրահներում:

  «Изумруд» խանութների ցանցը նույնպես ցանկություն է հայտնել համագործակցել՝ պատվիրելով մեծաքանակ ապրանքախումբ: Ներկայումս ուսումնասիրվում են

հետագա համագործության պայմանները այս և մի շարք այլ ընկերությունների հետ:

- ✓ «Առևտրի Տուն ՏԿ» ընկերությունը պայմանավորվածություն է ձեռք բերել 3 ոսկերչական ընկերությունների հետ և ներկայացրել իրենց արտադրանքի փորձնական նմուշները: Նախատեսվում են պայամանգրերի կնքում «Александра» «Тулупов» և «Садко» ոսկերչական ընկերությունների հետ:
- ✓ «Շաբեր» ընկերությունը մեծ ճանաչում է ձեռք բերել ոսկերչական գործիքների և հարակից պարագաներ արտադրող ընկերությունների շրջանում: Ձեռք են բերվել բանավոր պայմանավորվածություն մի շարք ռուսական ընկերությունների հետ, մասնավորապես՝ «Euro diamond» և «Кубачи», որի արդյունքում ընկերությունը պատրաստվում է մշտապես ներկայացված լինել այս շուկայում բացելով ոսկերչական գործիքների խանութ Մոսկվա քաղաքում:

- **«Стройэкспо. Строим дом. Энергоэффективное строительство/Зеленое строительство»** Բելառուսի Հանրապետություն, Մինսկ՝ 2015 թվականի հոկտեմբերի 13-16-ին կայացած ցուցահանդեսին աջակցություն է ցուցաբերվել բնական քարի արդյունահանման և վերամշակման գործունեություն իրականացնող «Մանանա Գրեյն» ՍՊ ընկերության մասնակցությանը:

Ցուցահանդեսի ընթացքում ընկերությունը հանդիպել է շուրջ 100 այցելուների հետ: Տաղավար են այցելել նաև Բելառուսի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարը և ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչներ:

Ընկերության արտադրանքով առավել հետաքրքրված են եղել 6 կազմակերպություններ, որոնց հետ շարունակվել են աշխատանքները («Elastic Stone», «ЭкспоСистемс», «ТермоФасад Полиалпан», «Камень камины», Унитарное Предприятие «МИНГОРСОВЕТ», «МАиС»):

- **«ԱՌՈՒ» Ղազախստանի Հանրապետություն, ք. Աստանա՝ 2015 հոկտեմբերի 16-18-ը** կայացել է 25-րդ միջազգային ոսկերչական ցուցահանդես-վաճառքը, որը հանդիսանում է միակ մասնագիտացված ոսկերչական ցուցահանդեսը Կենտրոնական Ասիայում: Ցուցահանդեսին մասնակցել են 10 պետություններից մոտ 100 կազմակերպություն:

Ցուցահանդեսի հիմնական այցելուներն են տվյալ շուկայի առևտրային դիստրիբյուտորները, ոսկեգործության ոլորտում խոշոր գնորդներ, այդ թվում առևտրային ցանցերի ներկայացուցիչներ: Ցուցահանդեսին մասնակցելու նպատակով աջակցություն է ցուցաբերվել թվով 6 կազմակերպությունների մասնակցությանը («Դե Լաուր», «Ես Սիլվեր», «Գոլդ Սմելլ», «Երեմ Հովհաննիսյան», «Ջեյ Սի Էյ ոսկերչական տուն» և «Հայկ Բալայան»): Մասնավորապես.

- ✓ «Դե Լաուր» ընկերությունը՝ կարևորելով այս շուկայի ներուժը և իրենց արտադրանքի պահանջարկի առկայությունը, Ալմա Աթա քաղաքում աշխատանքներ է իրականացնում խանութ-սրահի բացման ուղղությամբ (ձեռք է բերվել համապատասխան տարածք, իրականացվել է վերանորոգում):

- ✓ «Ջեյ Սի Էյ ոսկերչական տուն» ընկերությունն առաջին անգամ մասնակցեց Ասիական տարածաշրջանում ցուցահանդեսին և մասնակցության նպատակն էր ուսումնասիրել շուկայի հնարավորությունները՝ հետագա քայլերի նախանշման նպատակով:
- ✓ «Ես Սիլվեր» ընկերությունը ունեցել է մի շարք գործնական հանդիպումներ և քննարկումներ՝ «Ղազախյուվելիր»-ի և «Լ-Սիլվեր» ընկերություններն առաջարկել են տեղադրել իրենց խանութների ցանցում ընկերության արտադրանքը:

- **«Yerevan Show» 2015 ՀՀ. ք. Երևան՝ 2015 թվականի հոկտեմբերի 24-26** կայացել է «Yerevan Show» 5-րդ հոբելյանական միջազգային ոսկերչական ցուցահանդեսը:

Հիմնադրամի աջակցությամբ տեղական 18 ընկերություններ ցուցահանդեսին ներկայացրել են իրենց արտադրանքը և ընդհանուր առմամբ նախատեսվում է 2015-2016 թվականներին արտահանել շուրջ 500.000 ԱՄՆ դոլարի արտադրանք, մասնավորապես.

- ✓ «Ես Սիլվեր» ընկերությունը պայմանավորվածություն է ձեռք բերել «Русский Ювелир» ընկերության հետ՝ իրենց արտադրանքը ընկերության խանութների ցանցում ներկայացնելու ուղղությամբ:
- ✓ «Միտարիո Գոլդ» ընկերությունը ձեռք է բերել պայմանավորվածություն ՌԴ երկու ոսկերչական ընկերությունների հետ՝ «Атолл» և «Камея», փորձնական խմբաքանակ ներկայացնելու համար իրենց խանութների ցանցում:
- ✓ «Լեվանդ» ընկերությունը նախատեսում է արտահանել մի քանի նորաոճ զարդատուփեր «Росювелирторг» ընկերության պատվերով:
- ✓ «Ջի Դի Էն Դայմոնդս» ընկերությունն առաջին անգամ է ներկայացրել իր արտադրանքը և այն իրացնելու է ՌԴ-ում՝ համագործակցելով ռուսական «ЭСТЕТ» Ոսկերչական Տուն և «Экзол» ընկերությունների հետ:

- **«EnoExpo International Wine Fair» Լեհաստան, Կրակով 2015 թ. նոյեմբերի 4-6-ը՝** կայացած ցուցահանդեսին մասնակցում են 350 կազմակերպություններ, իսկ այցելուների քանակը՝ ավելի քան 13 հազ մարդ: Ցուցահանդեսին կազմակերպվել է մեկ միասնական «Հայկական» տաղավարի սկզբունքով Հայաստանի ալկոհոլային խմիչքների արտադրող 14 ընկերությունների մասնակցությունը (Արարատի «Աբրիկոն», «Անուշ-1», «Արենիի գինու գործարան», Երևանի «Շամպայն գինիների գործարան», Երևանի «Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ», «Երևանի գարեջուր», «Հին Արենի», «Մարան», «Սեմինա Քընսալթինգ»,

«Վան Արդի», «ՎանՍևան», «Վայն Հաուս», «Տիեռաս դե Արմենիա», «Պռոշյանի կոնյակի գործարան»:

Ցուցահանդեսին մասնակցում էին նաև գինեգործության ավանդույթներով հայտնի աշխարհի մի շարք երկրներ, այդ թվում Ֆրանսիայի, Իտալիայի, Իսպանիայի, Գերմանիայի և այլ երկրների առաջավոր ընկերություններ:

Ցուցահանդեսի մասնակցության հիմնական նպատակն է լեհական շուկայում հայկական արտադրանքի ճանաչելիության բարձրացումը՝ նպաստելով նոր գործընկերների ձեռքբերմանը և արտահանման խթանմանը:

Ըստ աշխատանքային կարգով ձեռք բերված տեղեկատվության ընկերությունները հանդիպումներ են ունեցել շուրջ 130-150 պոտենցիալ գնորդների հետ, որոնցից մոտ 30-ի հետ ներկայումս տարվում են բանակցություններ:

- ✓ «Մարան», «Պռոշյանի կոնյակի գործարան» և «Երևանի գարեջուր» ընկերությունները հանդիպումներ են ունեցել խանութների ցանցերի ներկայացուցիչների և ռեստորանային գործունեությամբ զբաղվող անձանց հետ: Ընկերություններն իրենց դիստրիբյուտորների միջոցով ներկայումս քննարկում են համագործակցության ընդլայնման հնարավորություններ, որի արդյունքում ակնկալում են արտահանման ծավալների ավելացում:
- ✓ «Պռոշյանի կոնյակի գործարան» ընկերությունը արդեն իսկ կնքել է թվով 7 նոր պայմանագրեր՝ 40.000 եվրո ընդհանուր արժողությամբ և ստացել արտահանման

նոր պատվերներ: Ներկայումս բանակցություններ են վարվում նոր հնարավոր գործընկերների հետ:

- ✓ «Մարան» ընկերությունը հանդիպումներ է ունեցել թվով 9 խանութների և դիստրիբյուտորական ընկերությունների հետ, այդ թվում՝ «Bona Gusto», «Synergy Com», «Гомельский винзавод», «Provinium», «Winnica», «Whisky and Spirit House», «ColorPress», «J&B Unique», «Bachus Cub» «Ideatour»: Նախնական պայմանավորվածություններ ձեռք են բերվել «Provinium» դիստրիբյուտորական ընկերության, «Bachus Cub» ներկրող ընկերության, «Whisky and Spirit House» խանութի և «Ideatour» ռեստորանի հետ: «Arinberd» ընկերության հետ կնքվել է 1800 շիշ արտահանման պայմանագիր՝ 7000 եվրո ընդհանուր արժողությամբ:
- ✓ «Երևանի գարեջուր» ընկերությունը հանդիպումներ է ունեցել թվով 20 ընկերությունների հետ, արդյունքում ձեռք են բերվել թվով 12 պայմանավորվածություն, կանխատեսվում է 12 պայմանագիր:
- ✓ «Վան Արդի» ընկերությունը հանդիպումներ է ունեցել թվով 10 հնարավոր գործընկերների հետ, որոնցից թվով 3 ընկերությունների հետ ձեռք են բերվել նախնական պայմանավորվածություններ: Ներկայումս իրականացվում է գների և քանակների ճշտում: Կանխատեսվում է 1 պայմանագիր՝ կախված ընկերության արտադրանքի սահմանափակ քանակից: Հնարավոր գործարքների մասին բանակցությունները կշարունակվեն 2016թ.:
- ✓ «ՎանՍևան» ՍՊ ընկերությունը հանդիպումներ է ունեցել թվով 25 հնարավոր գործընկերների հետ, որոնցից թվով 9-ի հետ ձեռք են բերվել նախնական պայմանավորվածություններ: Ակնկալվում է թվով 4 պայմանագիր:
- ✓ «Վայն Հաուս» ՍՊ ընկերությունը հանդիպումներ է ունեցել թվով 5 ընկերությունների հետ, որի արդյունքում ձեռք են բերվել 2 նախնական պայմանավորվածություն, քննարկվում է մեկ պայմանագիր:
- ✓ «Անուշ-1» ընկերությունը հանդիպումներ է ունեցել թվով 7 ընկերությունների հետ, որի արդյունքում ձեռք են բերվել 2 նախնական պայմանավորվածություն:
- ✓ «Արենիի գինու գործարան» ընկերությունը հանդիպումներ է ունեցել թվով 3 հանարավոր գործընկերների հետ: Նախնական պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել:

- ✓ Երևանի «Շամպայն գինիների գործարան» ընկերությունը հանդիպումներ և հնարավոր համագործակցության պայմանավորվածություններ է ձեռք բերել թվով 5 ընկերությունների հետ («Mane Union Trading SP z.o.o», «La Maison Des Vins», «Cantina Sociale Trento», «Dom Wina SP z.o.o», «Moses Distribution Group»):
- ✓ «Տիեռաս դե Արմենիա» ՓԲ ընկերությունը հանդիպումներ է ունեցել 3 հնարավոր գործընկերների հետ: Ներկայումս 2 ընկերության հետ վարվում են բանակցություններ, որոնք կշարունակվեն 2016 թվականին: Քննարկվում է մեկ ընկերության ներկայացուցչի այցի կազմակերպում Հայաստան՝ տեղում բանակցային գործընթացը շարունակելու համար:
- ✓ «Սեմինա Քընսալթինգ» ընկերությունը հանդիպումներ է ունեցել հնարավոր գործընկերների հետ, որոնց հետ ներկայումս իրականացվում են բանակցություններ:
- ✓ «Հին Արենի» ընկերությունը հանդիպումներ է ունեցել թվով 4 ընկերությունների հետ, որոնց հետ ձեռք են բերվել նախնական պայմանավորվածություններ և ներկայացվել կոմերցիոն առաջարկներ:
- ✓ Արարատի «Աբրիկոն» ընկերությունը հանդիպումներ է ունեցել թվով 5 հնարավոր գնորդների հետ, որոնցից 2-ի հետ նախնական պայմանավորվածություններ ձեռք են բերվել 2016թ-ից սկսել արտահանման գործընթացը:
- ✓ «Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ» ընկերությունը ունեցել է թվով 5 հանդիպում, այդ թվում՝ «Wajos GmbH», «Whisky and Spirit House», «Carrefour» ցանցերի ներկայացուցիչների հետ: Աշխատանքները գտնվում են բանակցային փուլում:

Արարատի «Աբրիկոն» և «ՎանՍևան» ընկերությունները հանդիպումներ են ունեցել նաև ոլորտի լրագրողների հետ, որոնցից 3-ի հետ «ՎանՍևան»-ը ներկայումս վարում է բանակցություններ՝ Հայաստանի գինեգործությունը և ընկերությունը ներկայացնող նյութերի տպագրման համար, իսկ լեհական գինու և ալկոհոլային խմիչքների մեկ ամսագիր արդեն իսկ նախապատրաստում է նյութ՝ Արարատի «Աբրիկոն»-ի վերաբերյալ, որպես յուրահատուկ խմիչքների արտադրող:

• 2015 թվականի դեկտեմբերի 7-11-ը ՌԴ Մոսկվա քաղաքում կայացած **«ЗДРАВООХРАНЕНИЕ-2015»** ցուցահանդեսին ցուցաբերվել է աջակցություն մեկ ընկերության մասնակցությանը («Արս Ֆայն»): Բանակցություններ են տարվել շուրջ 150 հնարավոր գնորդների հետ, որից 2016 թվականին նախատեսվում է համագործակցել 4-5 գնորդների հետ:

• Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել **2016 թվականի հունվարի 11-13-ը Նիդերլանդների Թագավորության մայրաքաղաք Ամստերդամում Wine Professional 2016** հանրահայտ գինու միջազգային մասնագիտացված ցուցահանդեսին մասնակցության ուղղությամբ:

• Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել **2016 թվականի հունվարի 19-22-ը ՌԴ Մոսկվա** քաղաքում **«MosShoes 2016»** միջազգային ցուցահանդեսին հայկական 7 ընկերությունների մասնակցությունն ապահովելու ուղղությամբ:

• **«World Money Fair», Գերմանիայի Դաշնություն, ք. Բեռլին, 2016 թ. փետրվարի 5-7-ը՝** «Երևանի Ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ընկերությունը նախատեսում էր մասնակցել ամենամյա տոնավաճառ-ցուցահանդեսին ներկայացնելով հուշամեդալներ, կրծքանշաններ, շքանշաններ և կոլեկցիոն հավաքածուներ: Մասնակցության ապահովման ուղղությամբ տարվել են նախապատրաստական աշխատանքներ, սակայն ընկերությունը հրաժարվել է մասնակցել ցուցահանդեսին:

• **«PRODEXPO 2016», ՌԴ, ք. Մոսկվա, 2016 թ. փետրվարի 8-12-ը՝** նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել ցուցահանդեսին 21 ընկերությունների մասնակցությանը աջակցելու նպատակով: Մասնավորապես՝ ընկերությունների կողմից ներկայացվել են հայտերը, կնքվել են համապատասխան պայմանագրերը, կազմակերպիչների հետ քննարկվել և հաստատվել է տաղավարի տեղադիրքը, զուգահեռաբար աշխատանքներ են իրականացվում հնարավոր կառուցապատող ընկերությունների հետ՝ տաղավարի դիզայնի, կառուցապատման աշխատանքների իրականացման շուրջ:

- **«SPIE Photonics West 2016», ԱՄՆ, ք. Սան Ֆրանցիսկո, 2016 թ. փետրվարի 16-18-ը՝** աշխատանքներ են իրականացվել ցուցահանդեսին թվով 2 ընկերության մասնակցությունը ապահովելու ուղղությամբ, սակայն տարբեր պատճառներով ընկերությունների կողմից համագործակցությունը չի շարունակվել և աշխատանքները դադարեցվել են:
- Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել **2016 թվականի փետրվարի 16-19-ը ՌԴ Մոսկվա** քաղաքում կայանալիք **«Текстильлегпром 2016»** միջազգային ցուցահանդեսին հայկական 7 ընկերությունների մասնակցությունն ապահովելու ուղղությամբ: Արդեն իսկ վարձակալվել է համապատասխան տարածք, քննարկվում են կառուցապատման հնարավոր տարբերակները:
- **«ProWein», Գերմանիա, ք. Դյուսելդորֆ, 2016 թ. մարտի 13-15-ը՝** նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել ցուցահանդեսին թվով 7 հայկական ընկերությունների մասնակցության կազմակերպման ուղղությամբ: Մասնավորապես, ընկերությունների կողմից ստացված հայտերի հիման վրա արդեն իսկ կնքվել են մասնակցության պայմանագրեր, ինչպես նաև հայկական տաղավարի տարածքի ընդլայնման նպատակով կազմակերպիչների հետ աշխատանքային կարգով վարվել են բանակցություններ, որի արդյունքում Հայաստանը ցուցահանդեսին կներկայանա 55 քմ մեկ միասնական «Հայկական» տաղավարով:
- **«ԱՌՈՒ» 2016 թվականի մարտի 20-23-ը** Ղազախստանի Հանրապետության Ալմա Աթա քաղաքում կկայանա թվով 27-րդ միջազգային ոսկերչական ցուցահանդես-վաճառքը, որին մասնակցության հայտեր են ներկայացրել թվով 10 ընկերություններ: Տարվել են մասնակցության ապահովման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներ:
- **«EXPO-2017» Ղազախստանի Հանրապետություն, ք. Աստանա՝** մշակվել և սահմանված կարգով ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն է ներկայացվել 2017 թվականին կայանալիք ցուցահանդեսին ՀՀ մասնակցության ծրագիրը և միջոցառումների ժամանակացույցը:
- Վերհանվել են ճշգրիտ ճարտարագիտության ոլորտի 2016 թվականի մի շարք միջազգային ցուցահանդեսների MCE (15-18 մարտ, Միլան), CWIEME (10-12 մայիս, Բեռլին), Innotrans (20-23 սեպտեմբեր, Բեռլին), Chillventa (11-13 հոկտեմբեր, Նյուրմբերգ), «AUTOMECHANIKA» (24-27 օգոստոս, Մոսկվա), «GAZ SUF 2016» (13-15 հոկտեմբեր, Մոսկվա) վերաբերյալ տեղեկատվություն և դրանք ներկայացվել են ոլորտի հիմնական

ընկերություններին՝ վերջիններիս կողմից հետաքրքրվածության դեպքում համապատասխան աշխատանքների մեկնարկման համար:

գ) Արտահանմանն օժանդակող կառույցների ներկայացուցիչների և դիստրիբյուտորների այցելություններ Հայաստան և/կամ արտերկիր, գործարար կապերի հաստատում միջոցառման շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- «Հայաստանի արտահանման ուղղվածություն ունեցող ոլորտների մրցունակության բարձրացում՝ իրացման արդիականացման և մուտք դեպի շուկա ապահովելով» ծրագրի շրջանակներում UNIDO-ի հետ համատեղ կազմակերպված գործարար համաժողովի շրջանակներում հրավիրվել և մասնակցել են ՌԴ շուրջ 15 ներկայացուցիչներ, այդ թվում ՌԴ դեսպանը, ազատ ոճի հագուստի առևտրով զբաղվող թվով 5 ընկերությունների ներկայացուցիչներ, նորաձևության խորհրդատուներ, ինչպես նաև ոլորտի մասնագիտացված լրագրողներ:

• **2015թ.-ի ապրիլի 26-28-ը առաջին անգամ իրականացվեց Արտադրված է Հայաստանում ցուցահանդեսը:**

Ցուցահանդեսին մասնակցում էին սննդամթերք, բնական հյութեր, զովացուցիչ ըմպելիքներ, բնական և հանքային ջրեր, գինի, կոնյակ, գարեջուր, ծխախոտ, թեթև արդյունաբերություն, կենցաղային քիմիա, շինանյութ և ապակյա տարաներ, դեղագործություն, ոսկերչություն ադամանդագործություն և ժամագործություն, հանքարդյունաբերություն և մետալուրգիա, ճշգրիտ ճարտարագիտություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, զբոսաշրջություն և այլ ոլորտներ ներկայացնող 305 ընկերություններ:

Ցուցահանդեսին մասնակցելու նպատակով հրավիրված են եղել մի քանի հարյուր արտասահմանյան պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչներ, դիստրիբյուտորներ, պոտենցիալ գնորդներ և ներդրողներ, որոնցից ներկա են եղել շուրջ 80 անձ:

Ցուցահանդեսի ընթացքում ձեռք բերվեցին մի շարք պայմանավորվածություններ և հետագա համագործակցության համաձայնություններ ինչպես տեղական ընկերությունների միջև, այնպես արտասահմանյան պատվիրակությունների և գործարարների հետ:

• 2015 թվականի հունիսի 18-19-ը կազմակերպվել է ՌԴ Մոսկվա քաղաքից արտահանմանն օժանդակող կառույցների ներկայացուցիչների և արտադրանքի իրացման հիմնական դիստրիբյուտորներ հանդիսացող պատվիրակության այցը Հայաստան:

Այցը նպատակ ուներ խթանելու հայկական արտադրանքի արտահանումը և նպաստել հայ արտադրողների ու ՌԴ առևտրային կազմակերպությունների հետ նոր կապերի ստեղծմանը և ամրապնդմանը:

Պատվիրակության կազմում ընդգրկված են եղել շուրջ 15 անձ՝ Մոսկվա քաղաքի առևտրի և ծառայությունների դեպարտամենտի ներկայացուցիչներ, ինչպես նաև խոշոր առևտրային կազմակերպությունների ղեկավարներ:



Եռօրյա այցի շրջանակներում կազմակերպվել է հանդիպում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում, այցելություններ մոտ մեկ տասնյակ ընկերություններ («Նատֆուդ», «Էկոտոմատո», «Արմյանսկի ուրոժայ», «Բիգա», «Ուրբան Լոգիստիկ Սերվիս», «Եվրոթերմ», «Սպիտակ Դելֆին», «Դուստր Մարիաննա»)՝ տեղում արտադրության ընթացքին և հնարավորություններին ծանոթանալու նպատակով, ինչպես նաև հայկական պանիրների և կաթնամթերքի համտես-միջոցառում:

Այցելուները կազմակերպությունների ներկայացուցիչներից տեղեկացան վերջիններիս կողմից թողարկվող արտադրանքի գների, առաքման հնարավորությունների և առկա դիստրիբյուտորների վերաբերյալ, ինչպես նաև փոխանակվեցին կոնտակտային տվյալներով՝ հետագայում համագործակցության քննարկման համար:

• **Հիմնադրամի աջակցությամբ կազմակերպվել է «Լիքվոր» ՓԲ ընկերության կողմից** Ուզբեկստանի Հանրապետությունից հրավիրված թվով 17 դիստրիբյուտորների Հայաստան այցելության և վերջինիս շրջանակներում «Բրիմօպտիկ. Նոր խոսք գլաուկոմայի բուժման ասպարեզում» կոնֆերանսը:

Միջոցառման հիմնական նպատակն էր կազմակերպել հյուրերի այցը ընկերության գործարան, ծանոթացնել արտադրատեսակներին, մասնակցել վերոնշյալ կոնֆերանսին, ինչպես նաև այցելել մի շարք հիվանդանոցներ ու կլինիկաներ:

Միջոցառման արդյունքում նախատեսվում է «Լիքվոր» ՓԲ Ընկերության արտադրանքի արտահանման ծավալների աճ դեպի Ուզբեկստանի Հանրապետություն:

• 2015 թվականի հուլիսի 16-20-ը կազմակերպվել է բելգիացի գործարար Մարկ Լևենսի ճանաչողական այցը Հայաստան՝ ալկոհոլային խմիչքները արտադրության ոլորտին ծանոթանալու նպատակով: Մասնավորապես, կազմակերպվել է գործարարի այցը «Շահնազարյան» ԳԿՏ, «Մանչո Գրուպ», «Նոյ» գինու կոնյակի գործարան, «Արարատի Աբրիկոն» և «Աստղունք» ընկերություններ, որտեղ վերջինս ծանոթացել է արտադրական գործընթացին, արտահանման պայմաններին և հնարավորություններին:

• 2015թ. օգոստոսի 17-ից 21-ը Հայաստան էին ժամանել Հնդկաստանի Հանրապետությունից KGK ոսկեգործական և ադամանդագործական ընկերության պատվիրակությունը, ի դեմս ընկերության տնօրեն Սանջեյ և Սանդիպ Կոտարիների, որոնք ցանկություն են հայտնել ներդրումներ իրականացնել Հայաստանում:

Հիմնադրամի կողմից կազմակերպվել է այցելություն «Մերիդիան» ոսկերչական ԱՏԳ, որտեղ հյուրերը ծանոթացան արտադրության կազմակերպման, այդ թվում հումքի ներմուծման և պատրաստի արտադրանքի արտահանման հնարավորություններին:

• 2015թ. սեպտեմբերի 14-ից 19-ը Հայաստան էին ժամանել Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունից թվով 11 գործարարներ հայ-վիետնամական բարեկամական կապերի շրջանակներում: Այցի շրջանակներում կազմակերպվել են մի շարք այցեր, այդ թվում «Դե Լաուր» ոսկերչական ընկերության արտադրամաս և Երևանի «Շամպայն Գինիների գործարան»՝ տեղում ծանոթանալով արտադրության գործընթացներին:

4) ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

• Կազմակերպվել է Դեղագործության և բիոտեխնոլոգիաների ոլորտի համար «Դեղերի անվտանգություն» և «Գլոբալ կարգավորման պահանջներ» հեռահար վերապատրաստման դասընթացները: Դասընթացները ձեռք են բերվել Մեծ Բրիտանական Ինֆոնետիկա ՍՊԸ-ից 2014 թվականին և շարունակվելու է մինչև 2015 թվականի հունիս ամիսը: Հարկ է նշել, որ վերոնշյալ դասընթացի իրականացման անհրաժեշտությունը առաջացել է ոլորտի ընկերությունների կարիքների հիման վրա: Ոլորտի 8 ընկերություններից, ինչպես նաև Հայաստանի դեղ արտադրողների և ներմուծողների միության կողմից ստացվել են պաշտոնական գրություններ, որտեղ խնդրում են աջակցել ոլորտի կարողությունների զարգացմանը:

Նշված դասընթացներին 2014-2015թ. մասնակցել են 100 անձ, որից «Դեղերի անվտանգություն» դասընթացի թվով 55 մասնակիցներից համապատասխան սերտիֆիկատներ են ստացել 45-ը, իսկ «Գլոբալ կարգավորման պահանջներ» դասընթացի թվով 45 մասնակիցներից՝ 36-ը:

• 2015թ. հուլիսի 22-24-ը Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերություն (GIZ) Հայաստանյան գրասենյակի «ԵՄ թիրախային նախաձեռնություն Հայաստանի համար» ծրագրի շրջանակներում Հիմնադրամի հետ համատեղ կազմակերպվել է ուսուցողական դասընթաց՝ «Սթարթափներ. Բիզնես մոդելի մշակումը և առաջարկային փաթեթի պատրաստումը ներդրողների համար» թեմայով:

Դասընթացի հիմնական նպատակն էր նպաստել Հայաստանում տնտեսության զարգացման տարբեր ոլորտներում զբաղված կազմակերպությունների կարողությունների բարելավմանը՝ օգտագործելով Սփյուռքահայ մասնագետների ներուժը, ինչպես նաև

Հայաստանի նորաստեղծ ընկերություններին ծանոթացնել միջազգային ասպարեզում ընդունված բիզնես մոդելներին և փոխանցել այնպիսի հմտություններ, որոնք կօգնեն բիզնես գաղափարի կենսունակությունն արդյունավետորեն գնահատել, մշակել և ձևակերպել այն և որպես առաջարկ ներկայացնել օտարերկրյա ներդրողներին: Բացի այդ, դասընթացը շատ օգտակար էր բիզնեսի հետագա ռազմավարության մշակման համար: Դասընթացին մասնակցեցին 28 անձ, որոնք զբաղված են մարկետինգի, բիզնեսի զարգացման, ռազմավարական և ներդրումային ոլորտներում:

- Վերոնշյալ ծրագրի շրջանակներում 2015թ. հոկտեմբերի 26-30-ը Վինսենթ Բոյաջյանը (ոսկերիչ/դիզայներ, Ֆրանսիա) այցելել է Հայաստան, որի մասնակցությամբ անց են կացվել մի շարք դասընթացներ՝ մասնագիտական սեմինարներ և վարպետության դասեր հետևյալ ուղղություններով.
    - ✓ «Ոսկերչական դիզայնի դասավանդման մեթոդները: Դասավանդման կուրսերի/առարկաների մշակումը Ֆրանսիական փորձի հիման վրա»՝ 32 մասնակից,
    - ✓ «Ոսկու հղկման և մշակման ժամանակակից տենդենցները»՝ 14 մասնակից:

Ծրագրի շրջանակներում այցելություններ են կազմակերպվել մի շարք արտադրամասեր, որտեղ պրակտիկ խորհուրդներ են տրվել արտադրական գործընթացի վերաբերյալ: Մասնավորապես, «Դե Լաուր», Երևանի Ոսկերչական գործարան-1 «Գնոմոն», «Ջեյ Սի Էյ ոսկերչական տուն» և «Երեմ Հովհաննիսյան» ընկերությունների արտադրամասեր: Տեղի է ունեցել հանդիպում՝ Հայաստանում գործող ասոցիացիայների ղեկավարների և մասնակից անդամների հետ, կարևորվել է ոսկերչական և դիզայներական դպրոցի առկայության անհրաժեշտությունը, քննարկվել են հետագա քայլերը շահագրգիռ կողմերի հետ:

• 2015թ. սեպտեմբերի 22-24-ը CBI-ի ծրագրերի ղեկավարի և ներկայացուցչի հետ կազմակերպվել են հանդիպումներ թվով 5 գինեգործական կազմակերպությունների հետ, որոնք ընդգրկված են CBI-ի հնգամյա աջակցության ծրագրում, ինչպես նաև քննարկվել են Հիմնադրամի հետ հետագա համագործակցության ծրագրերը:

• 2015թ. սեպտեմբերի 23-ին անցկացվել է «Մասնագիտական ցուցահանդեսներին գինու ներկայացման հմտությունների զարգացում» խորագրով վերապատրաստման դասընթաց, որը վարվել է Երևանի Գինու ակադեմիայի դասախոսների կողմից:

Դասընթացը ընդգրկեց 1 առարկա՝ մասնագիտացված ցուցահանդեսի մասնակցության նախապատրաստական աշխատանքներ, տաղավարի ձևավորման հայեցակարգի, արտադրանքի ներկայացում և համտեսի կազմակերպում:

Ներկայացվեցին հետևյալ թեմաները՝

- ✓ արհեստավարժ մասնակցության ապահովում, միջազգային չափանիշներին համապատասխան համտեսների կազմակերպում (տաղավարի ձևավորում, ապրանքների տեսականու և քանակի ընտրություն, արտադրանքի ներկայացման շնորհանդեսների և գովազդային նյութերի պատրաստում, հրավերների մշակում, թիրախային խմբի ընտրություն, հաճախորդների և նոր գործընկերների գրավում, բանակցությունների վարում),
- ✓ մասնագիտացված միջազգային ցուցահանդեսի մասնակցի /ցուցադրող/ աշխատանքի պլանավորում, մասնակցության ծրագրի մշակում, ծախսերի հաշվարկում, գնահատում /մասնակցության վճար, տաղավարի և սարքավորումների վարձակալում, դիզայն և կառուցապատում, կոմունալ վճարումներ, բեռնափոխադրում, մաքսային վճարներ և այլն/ և արդյունքների ամփոփում,
- ✓ արտահանման ապահովագրության մեխանիզմների ներկայացում Արտահանման ապահովագրական կազմակերպության կողմից:

Դասընթացին մասնակցեցին շուրջ 20 ընկերությունների, ինչպես նաև GIZ-ի և CBI-ի ներկայացուցիչներ:

• Suze la Rousse գինու համալսարանի, Rhône-Alpes դեպարտամենտի և Գինու Ակադեմիայի հետ համագործակցությամբ, մասնագիտական վերապատրաստման ծրագրերի շրջանակներում 12 մասնագետ 10-օրյա դասընթացներին են մասնակցել Suze la Rousse-ի համալսարանում:

• «Հայաստանի արտահանման ուղղվածություն ունեցող ոլորտների մրցունակության բարձրացում՝ իրացման արդիականացման և մուտք դեպի շուկա ապահովելով» UNIDO ծրագրի շրջանակներում կազմակերպվել թեթև արդյունաբերության ոլորտի դասընթաց՝ հետևյալ ուղղություններով.

- ✓ Անհատական վերապատրաստում յուրաքանչյուր շահառու ձեռնարկության համար. «Ինչպես պատրաստել վաճառքի համար նախատեսված հավաքածու». Հավաքածուի բաղադրիչները և մշակման փուլերը (Մելանտե, Արսֆայն, Նանման, Ագնեսա, Ֆիրմա Լիդա, Հայջինս, Տոսպ, Քանաքեռի կարի ֆաբրիկա)
- ✓ Թիմային ժողով. Թիմ հասկացությունը, թիմային ժողովի ազդեցությունը ծրագրի արդյունքների վրա: (Նանման, Մելանտե, Հայջինս, Ագնեսա, Ֆիրմա Լիդա, Տոսպ, Քանաքեռի կարի ֆաբրիկա, Արսֆայն, Ռասսի, Ատեքս)
- ✓ Դասընթաց արտադրության պլանավորման և կազմակերպման վերաբերյալ վերապատրաստող մասնագետների համար (Մելանտե, Նանման, Տոսպ, Քանաքեռի կարի ֆաբրիկա)
- ✓ Գործնական դասընթաց գարուն-ամառ 2016 կապսուլային հավաքածուի ստեղծման համար (Մելանտե, Նանման, Տոսպ, Քանաքեռի կարի ֆաբրիկա, Արսֆայն)

5) ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Հիմնադրամի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված պահանջներին համապատասխան հայտարարվել է մրցույթ՝ «ՀՀ սննդի և խմիչքների արդյունաբերության արտադրանքի դեպի Ռուսաստանի Դաշնություն արտահանման հնարավորությունների և առկա խնդիրների ուսումնասիրություն և վերլուծություն» ձեռքբերման համար: Արդյունքում հաղթող է ճանաչվել «Ամերիա» ՓԲ ընկերությունը, որի կողմից մշակվել և ներկայացվել պայմանագրով նախատեսված աշխատանքը, որը հաստատվել է:

Հետազոտության նպատակն է բացահայտել Հայաստանի Հանրապետության Եվրասիական տնտեսական միությանը անդամակցելուց հետո Ռուսաստանի Դաշնություն շուկա հայկական սննդի և խմիչքների ոլորտների արտադրանքների արտահանման հնարավորությունները, առկա խնդիրները և ներկայացնել մուտքի ապահովմանն ուղղված առաջարկներ:

ԳԼՈՒԽ II. «ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» 2015 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1 ՀԱՅԿԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ԽԹԱՆՈՒՄ (ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԳՈՎԱԶԴԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ)

1.1 Գովազդատեղեկատվական համակարգ

1.1.1 Տպագիր և էլեկտրոնային գովազդատեղեկատվական նյութեր

1) Կատարվել են նախապատրաստական աշխատանքներ Հայաստանը և Երևանը ներկայացնող բրոշյուրների և քարտեզների տպագրության համար: Մշակվել են տեխնիկական բնութագրեր, ինչպես նաև ստորագրվել է համապատասխան պայմանագիր 20.000 հատ բրոշյուր և 20.000 հատ քարտեզ 6 լեզուներով՝ անգլերեն, ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն և իսպաներեն, տպագրելու համար, որոնք կմատակարարվեն մինչև 2016 թվականի մարտ ամիսը : Բրոշյուրներում ներկայացված են ՀՀ բոլոր մարզերի զբոսաշրջային գրավչություն ունեցող ամենակարևոր ռեսուրսները: Քարտեզները ներառում են հակիրճ և համապարփակ տեղեկատվություն Հայաստանի աշխարհագրական դիրքի, բնակչության, մուտքի արտոնագրի, Երևանի տեսարժան վայրերի և այլ մանրամասների վերաբերյալ: Գովազդատեղեկատվական նյութերը կբաժանվեն այցելուներին և մասնակիցներին միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսների ընթացքում, հայկական դեսպանատներին արտերկրում, միջազգային զբոսաշրջային կազմակերպություններին ու գործակալություններին, արտասահմանյան պատվիրակություններին և տեղական պետական մարմիններին:

2) Ջերմուկ քաղաքի մասին պատմող ֆոտոալբոմը տպագրվել է 3000 օրինակով անգլերեն և իսպաներեն: Ֆոտոալբոմը ներառում է Ջերմուկ քաղաք-առողջարանի մասին 150 լուսանկար և պատմամշակութային հուշարձանների, ըմպելասրահի, առողջարանների, տարատեսակ շրջայցերի, միջոցառումների վերաբերյալ նյութեր:

3) Հայաստանի տեսարժան վայրերն ու զբոսաշրջային արդյունքը ներկայացնող «Հայաստան՝ Նոյի երկիր» անվանումով ֆիլմը բազմացվել է 1000 օրինակով:

4) Կնքվել է պայմանագիր նկարահանված 10 րոպե տևողությամբ հոլովակի 1000 օրինակով բազմացնելու համար, որի մատակարարումը կիրականացվի մինչև 2016 թվականի մարտ ամիսը: Հոլովակում ներկայացված է ՀՀ զբոսաշրջային գրավչությունը 4 հիմնական ուղղություններով՝ ՀՀ բնաշխարհ, մշակույթ, կրոն և սնունդ-հյուրընկալություն:

1.1.2 Էլեկտրոնային մարքեթինգի ապահովում

1) Նախագծման փուլում է Հայաստանի զբոսաշրջային գրավչությունն ու արդյունքն ինչպես արտաքին, այնպես էլ ներքին լսարանին ներկայացնող armenia.travel մասնագիտացված կայքը: Գործարկման սկզբնական շրջանում կայքը կլինի եռալեզու՝ անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն և կդառնա ուղեցույց Հայաստան այցելող զբոսաշրջիկների համար՝ տեղեկատվություն տրամադրելով տեղական հյուրանոցների, իջևանատների, երթուղիների, ռեստորանների, սրճարանների, տեսարժան վայրերի մասին:

2) Մշակվել են ՀՀ մարզերում 40 քայլարշավային երթուղիներ և տեղադրվել են www.wikiloc.com միջազգային կայքում՝ նպատակ ունենալով Հայաստանում խթանելու արկածային զբոսաշրջությունը և ներգրավելու նոր զբոսաշրջիկներ:

1.1.3 Համացանցով, սոցիալական ցանցերով Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ներկայացում

Նկարահանվել է 10 րոպե տևողությամբ հոլովակ, որտեղ ներկայացված է ՀՀ զբոսաշրջային գրավչությունը 4 հիմնական ուղղություններով՝ ՀՀ բնաշխարհ, մշակույթ, կրոն և սնունդ-հյուրընկալություն:

1.1.4 Պետական աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեության ապահովմանը

Ֆինանսական աջակցություն տրամադրելու նպատակով կնքվել են պայմանագրեր համապատասխան քաղաքապետարանների կողմից երաշխավորված կազմակերպությունների հետ.

- «Գեղարդի Հովտի ագրոտուրիզմի Զարգացման» ՀԿ - ի հետ՝ **Գառնիում** գտնվող այցելուների տեղեկատվական կենտրոնի շարունակական աշխատանքներն ապահովելու նպատակով: Կենտրոնը տրամադրել է բազմաբնույթ տեղեկատվություն Կոտայքի մարզի, մասնավորապես, Գառնի, Գեղարդ գյուղերի տեսարժան վայրերի, բնական գրավչությունների, կացարանների, փոխադրամիջոցների, սննդի վայրերի վերաբերյալ: Նշված տեղեկատվությունը տրամադրվել է առձեռն և առցանց տարբերակով: Կատարվել է տեղեկատվական կայքի պարբերաբար թարմացում:
- «Գորիսի զարգացման կենտրոն» (ԶՏԿ) ՀԿ-ի հետ՝ Գորիսում գտնվող այցելուների տեղեկատվական կենտրոնի շարունակական աշխատանքներն ապահովելու նպատակով: Զբոսաշրջիկները ստացել են տեղեկատվություն մարզի տեսարժան վայրերի, բնական գրավչությունների, կացարանների, փոխադրամիջոցների, սննդի վայրերի մասին: Նշված տեղեկատվությունը տրամադրվել է առձեռն և առցանց տարբերակով: Կատարվել է տեղեկատվության հավաքագրում և թարմացում տվյալ մարզի հյուրանոցների, հյուրատների գնացուցակի վերաբերյալ: Իրականացվել են մարզի քարտեզի և բուկլետի տպագրության համար դիզայներական աշխատանքներ: Նախատեսվում է յուրաքանչյուրից տպագրել 1000 օրինակ:
- «Դիլիջանի զբոսաշրջության ասոցիացիա» ՀԿ-ի հետ՝ Դիլիջանում գտնվող այցելուների տեղեկատվական կենտրոնի շարունակական աշխատանքներն ապահովելու նպատակով: Կենտրոնը սպասարկել է այցելուներ ինչպես Հայաստանից, այնպես էլ աշխարհի տարբեր երկրներից: Զբոսաշրջիկներին տրամադրվել է բազմաբնույթ տեղեկատվություն Տավուշի մարզի և, մասնավորապես, Դիլիջան քաղաքի վերաբերյալ անգլերեն և ռուսերեն:
- «Ծաղկաձորի հյուրանոցների միություն» ՀԿ-ի հետ՝ Ծաղկաձորում գտնվող այցելուների տեղեկատվական կենտրոնի շարունակական աշխատանքներն ապահովելու նպատակով: Կենտրոնի այցելուներին տրամադրվել է տեղեկատվություն Կոտայքի մարզի սննդի, գիշերելու, տեսարժան վայրերի վերաբերյալ: Մարզի վերաբերյալ քարտեզի և տեղեկատվական բրոշյուրի տպագրության համար իրականացվել են դիզայներական աշխատանքներ: Նախատեսվում է յուրաքանչյուրից տպագրել 300 օրինակ:
- «Սևան» բարեգործական հիմնադրամի հետ՝ Սևան թերակղզու տարածքում գտնվող այցելուների տեղեկատվական կենտրոնի շարունակական աշխատանքներն ապահովելու նպատակով: Գործունեության ընթացքում զբոսաշրջիկներին տրամադրվել է ընդհանուր ինֆորմացիա Սևանի, Գեղարքունիքի և ՀՀ մասին: Մեծամասնություն են կազմել Իրանի

Իսլամական Հանրապետությունից ժամանած զբոսաշրջիկները, այնուհետև եվրոպացիները, մասնավորապես՝ ֆրանսիացիները: Թերևս վերջին տեղում են գտնվում ռուս զբոսաշրջիկները: Աշխատանքներ են տարվել մարզի վերաբերյալ 500 հատ բացիկների տպագրության համար:

1.1.5 Պետական աջակցություն Համահայկական աշխարհագրական ասոցիացիային՝ «Բացահայտիր Հայաստանը» և «Երևան» հեռուստածրագրերի պատրաստման և հեռարձակման համար

Համահայկական աշխարհագրական ասոցիացիայի հետ կնքվել է պայմանագիր, համաձայն որի հանրային հեռուստատեսությամբ ապահովվել է նշված 2 հեռուստածրագրերի հեռարձակումը 24 անգամ: Հաղորդումների միջոցով ներկայացվել են Հայաստանի պատմական, ճարտարապետական կոթողներն ու հուշարձանները, բնակավայրերի անցյալն ու ներկան, գեղատեսիլ վայրերը, ավանդույթները, առեղծվածային կողմերը և այլն:

Հեռարձակվել են «Բացահայտիր Հայաստան» շարքից ՝ Բջնի, Զվարթնոց, Էջմիածին, Ծաղկաձոր, Գառնի, Ջերմուկ, Գեղարդ, Կասկադ, Աշտարակ, Փարաջանով, Կոնյակ, Աշտարակ 2 հեռուստանախագծերը, յուրաքանչյուրն իր կրկնությամբ և «Երևան» շարքից՝ Ընդհանուր, Վերնիսաժ, Թանգարաններ, Սիրահարների այգի, Թատրոններ, Հայֆեստ, Արձաններ, Համազգային թատրոն, Կենդանաբանակն այգի, Հայ ֆեստ (կինոփառատոն), Ավետիք Իսահակյան, Ալեքսանդր Սպենդիարյան, Միհեր Մկրտչյան հեռուստանախագծերը իրենց կրկնություններով:

1.1.6 Թիրախային շուկայում Հայաստանի խթանում. Հայաստանը միջազգային զբոսաշրջային ուղեցույցերոի շարքում

Իտալական Auctoria ընկերության հետ կնքվել է պայմանագիր հանրաճանաչ Իտալական ULISSE MAGAZINE (Alitalia) ամսագրում ՀՀ զբոսաշրջային արդյունքը ներկայացնող հոդվածի տպագրման համար: Իտալական ULISSE MAGAZINE (Alitalia) ամսագրի ընթերցողների քանակը հասնում է 2.500.000-ի:

Հայկական զբոսաշրջային արդյունքը Ռուսաստանի ամենահեղինակավոր «Оранжевый гид» և «Красный гид» ուղեցույցերում ընդգրկելու նպատակով համագործակցություն է ձեռք բերվել "Путеводители Эксмо" ընկերության հետ, համաձայն ինչի մինչև 2016 թվականի մարտ

ամիսը նշված ուղեցույցների շարքում կավելանա նաև Հայաստանը ներկայացնող 2 գիրք-ուղեցույցը:

1.2 Միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ներկայացում

1) 2015թ հունվարի 28-ից փետրվարի 1-ը Հայաստանը տեղական երեք զբոսաշրջային ընկերությունների հետ համատեղ (Արմենտուր, Էլիտար Թրավել և Ամիստադ) ներկայացրել է Հայաստանի զբոսաշրջային գրավչությունն Իսպանիայի մայրաքաղաք Մադրիդում կայացած «Fitur'2015» միջազգային ամենամյա զբոսաշրջային ցուցահանդեսին: Հայաստանի գրավիչ ու բազմաբնույթ զբոսաշրջային նկարագրի ձևավորման նպատակով այցելուներին տրամադրվել են գովազդային նյութեր և քարտեզներ իսպաներենով: Այս տարի ցուցահանդեսին մասնակցել են 167 երկրների շուրջ 11 հազար զբոսաշրջային ընկերություններ, ավելի քան 112 հազար առևտրային գործակալներ և 98 հազար այցելուներ:

2) 2015թ. մարտի 4-8-ը Հայաստանի զարգացման հիմնադրամը 16 զբոսաշրջային ընկերությունների հետ համատեղ (Նուեվա Վիստա, Գերմիմպեքս, Արմեն Տուր, Լևոն Թրավել, Վիվա Տուր, Արքայադուստր Մանե, Սաբերատուր-Սևան, Սիմա Տուր, Գլորիա Թրավել, Ջեոգրաֆիկ Թրավել, Արմենիա Թրավել, Էլիտար Թրավել, Արմինիուս, Արմինտուր, Թուֆենկյան հոսփիթալիթի, Սակվոյաժ թրավել) ներկայացրել է Հայաստանի զբոսաշրջային գրավչությունը Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում կայացած «ITB'2015» միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին: Այս տարի առաջին անգամ Հայաստանը տեղակայված էր 134.5 քառ. մ. տարածքի վրա երկու տաղավարներով: Ցուցահանդեսին մասնակցել են 13 000 զբոսաշրջային գործակալություններ շուրջ 180 երկրներից և ավելի քան 190 000 այցելու: Ցուցահանդեսի ընթացքում կազմակերպվեց նաև շնորհանդես (Road Show), որի ընթացքում միջազգային հանրությանը ներկայացվել են Հայաստանի պատմամշակութային և քրիստոնեական հարուստ ժառանգությունը ցուցադրող գովազդային նյութեր և քարտեզներ գերմաներենով: Առաջին անգամ նաև Հայաստանի տաղավարում ցուցադրվել է խաչքարի փորագրում:

3) 2015թ. մարտի 18-21-ը Հայաստանի զարգացման հիմնադրամը տեղական 14 զբոսաշրջային ընկերությունների հետ համատեղ (Պանորամա Ռեսորտ, Գրինվեյ,

Թուֆենկյան հոսփիթալիթի, Թրավելոն, Ինտուր, Արմենիա Թրավել, Լոռե Թրավել, Յունայթեդ Թրավել, Վիվա-Տուր, Սակվոյաժ Թրավել, Էլիտար Թրավել, Սաբերատուր-Սևան, Վիզավի Տուր, Բլեքսթոուն) ներկայացրել է Հայաստանի զբոսաշրջային գրավչությունը ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում տեղի ունեցած MITT'2015 միջազգային ցուցահանդեսին: Այն Ռուսաստանի ամենամեծ ցուցահանդեսն է, որին այս տարի մասնակցել են 186 երկրներից շուրջ 1800 ընկերություններ: Այս տարի առաջին անգամ Հայաստանը տեղակայված էր 70 քառ. մ. տարածքի վրա: Ցուցահանդեսի ընթացքում կազմակերպվեց նաև շնորհանդես (Road Show), որի ընթացքում միջազգային հանրությանը ներկայացվել են Հայաստանի պատմամշակութային և քրիստոնեական հարուստ ժառանգությունը ցուցադրող գովազդային նյութեր և քարտեզներ ռուսերենով: Ցուցահանդեսին Հայաստանի մասնակցությունը նպատակ ունի՝ մեծացնելու Ռուսաստանից ներգնա զբոսաշրջային հոսքերի աճը՝ առավելագույնս իրացնելով զբոսաշրջային ոլորտում առկա հայ-ռուսական համագործակցության մեծ ներուժը:

4) 2015թ. սեպտեմբերի 24-27-ը երկու տեղական զբոսաշրջային կազմակերպություններ («Աբիկ» և «Օպերա Թուրս») ներկայացրել են Հայաստանը Տոկիոյում կայացած «JATA'2015» զբոսաշրջային միջազգային ցուցահանդեսին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ցուցահանդեսներին պետք է մասնակցի առնվազն 3 ընկերություն՝ Հայաստանի զարգացման հիմնադրամը համաձայնեցնելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության ցուցահանդեսին մասնակից ընկերություններին ֆինանսական աջակցություն չի ցուցաբերվել, իսկ տնտեսված միջոցները, համաձայնեցնելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ, ուղղվել են Հայաստան ՌԴ-ից թվով 130 ոլորտի ներկայացուցիչների այցի կազմակերպման համար:

5) 2015թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 2-ը Հայաստանը զարգացման հիմնադրամը տեղական 4 զբոսաշրջային ընկերությունների հետ համատեղ՝ «Սաբերատուր-Սևան», «Արմենիա Թրավել», «Նուեվա Վիստա», «Ֆանտուր Արմենիա Թրավել ընդ Դի-Էմ-Սի», ներկայացրել է Հայաստանը Փարիզում կայացած «TopResa'2015» զբոսաշրջային միջազգային ցուցահանդեսին: «TopResa»-ն աշխարհի խոշորագույն զբոսաշրջային ցուցահանդեսներից է, որին այս տարի մասնակցել են 160 երկրներից ավելի քան 1200 կազմակերպություններ և շուրջ 30 000 զբոսաշրջության ոլորտի մասնագետներ: Ցուցահանդեսի ընթացքում միջազգային հանրությանը ներկայացվել են Հայաստանի պատմամշակութային և քրիստոնեական

հարուստ ժառանգությունը, մեր երկրի զբոսաշրջային ներուժն ու գրավչությունը, ինչպես նաև բազմատեսակ գովազդային նյութեր ֆրանսերենով: Խոշորագույն այս ցուցահանդեսին Հայաստանի մասնակցությունը նպատակ ունի խթանել Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի միջազգային հեղինակության և երկրի ճանաչելիության մակարդակի բարձրացմանը, ներգնա զբոսաշրջային հոսքերի աճին: Այն նաև լավ հարթակ է նոր գործընկերներ ձեռք բերելու և շահավետ գործարքներ կնքելու համար:

6) 2015 թ. հոկտեմբերի 8-10-ը Հայաստանի զարգացման հիմնադրամը տեղական 4 զբոսաշրջային ընկերությունների հետ համատեղ՝ «Երկիր Նաիրի», «Արմենիա Թրավել», «Նատուրա Տուր», «Լոռե Թրավել», ներկայացրել է Հայաստանը Իտալիայի Ռիմինի քաղաքում կայացած «TTG Incontri-2015» միջազգային ցուցահանդեսին: Ոլորտի ավելի քան 1000 գնորդներ աշխարհի 85 երկրից հետաքրքրված են նոր զբոսաշրջային պրոդուկտներով, այդ իսկ պատճառով այս տարի ցուցահանդեսի շեշտը հենց նորարության վրա է դրված եղել: ԷՔՍՊՈ-ն զբաղեցրել է 100 000 քմ տարածք և ներկայացրել զբոսաշրջային ավելի քան 130 ուղղություն: Հայկական ընկերությունների հետ միասին այս տարի ցուցահանդեսին մասնակցել են շուրջ 60 000 ճանաչված ու նորաստեղծ զբոսաշրջային գործակալություններ ամբողջ աշխարհից: Հայկական ընկերությունները B2B հանդիպումների ընթացքում եվրոպացի գործընկերներին են ներկայացրել մեր երկրի զբոսաշրջային ուղղությունները, տեսարժան վայրերը, հյուրանոցային տնտեսությունը, զբոսաշրջային նոր պրոդուկտները՝ համագործակցություն ստեղծելու ծրագրերով:

7) 2015 թ. նոյեմբերի 2-5-ը Հայաստանի զարգացման հիմնադրամը 6 տեղական զբոսաշրջային ընկերությունների հետ համատեղ՝ «Նուեվա Վիստա», «Արմենիա Թրավել», «Վիվա Տուր», «Արքայադուստր Մանե», «Լոռե Թրավել», «GO to Armenia», ներկայացրել է Հայաստանը Լոնդոնում տեղի ունեցած «World Travel Market 2015» զբոսաշրջային միջազգային ամենամյա ցուցահանդեսին: Այս տարի միջոցառմանը մասնակցել են 186 երկրներից ավելի քան 5000 զբոսաշրջային ընկերություններ և ոլորտի 50,000 մասնագետ: Ցուցահանդեսի ընթացքում անգլերենով միջազգային հանրությանը ներկայացվել են Հայաստանի և Արցախի պատմամշակութային և քրիստոնեական ժառանգությունը ցուցադրող գովազդային նյութեր և քարտեզներ: Մասնակցությունը առաջատար այս ցուցահանդեսին նպատակ ունի խթանելու Հայաստանի և Արցախի

զբոսաշրջության աճը միջազգային շուկայում, ինչպես նաև նպաստելու ներգնա զբոսաշրջային հոսքերի աճին: Միաժամանակ՝ ցուցահանդեսի շրջանակում, կազմակերպվել էր Հայաստանի զբոսաշրջության ոլորտի համար շնորհանդես (Road Show), որը հնարավարություն ընձեռեց ներկայացնելու հայկական մշակույթը, ուտեստները, զբոսաշրջային գրավչությունը և արդյունքը:

8) 2015թ. նոյեմբերի 26-28-ը Հայստանի զարգացման հիմնադրամը տեղական 3 զբոսաշրջային ընկերությունների հետ համատեղ՝ «Նուեվա Վիստա», «Գլորիա Թրավել» և «Վոյաժ Արմենիա», ներկայացրել է Հայաստանը Լեհաստանում կայացած «TT Warsaw 2015» միջազգային ցուցահանդեսին:

1.3 Օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջության ոլորտի մասնագետների և պոտենցիալ ներդրողների Հայաստան ճանաչողական այցերի կազմակերպում

2015թ. մայիսի 29-ից հունիսի 2-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է թվով 14 իսրայելյան ճամփորդական լրագրողների ճանաչողական այցը Հայաստան: Այցի շրջանակում լրագրողներին ներկայացվել են Հայաստանի տեսարժան վայրերն իրենց ողջ հմայքով: Լրագրողները այցելել են Տաթև, Տաթևի ճոպանուղի, Խնձորեսկի կիրճ, Գառնու հեթանոսական տաճար, Դիլիջանի ազգային պարկ, ծանոթացել և հավաքագրել տեղեկատվություն հայկական ազգային ուտեստների վերաբերյալ, կատարել լուսանկարահանումներ:

Ներկա են գտնվել նաև լավաշի թխման արարողությանը, շփվել տեղի բնակչության հետ՝ ծանոթանալով համայնքների յուրահատկություններին և զբոսաշրջային գրավչություններին: Այցից հետո իսրայելյան լրագրողների կողմից տպագրվել է թվով 4 հոդված իսրայելական հետևյալ ամսագրերում՝ Globes, Maariv, Nana10, Mako:

2015թ. հուլիսի 22-ից հուլիսի 28-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է թվով 20 ռուս լրագրողների, զբոսաշրջության ոլորտի մասնագետների և պոտենցիալ ներդրողների ճանաչողական այցը Հայաստան: Ռուս լրագրողներիը այցելել են Լեռնային Ղարաբաղ, ծանոթացել տեսարժան վայրերին, մասնակցել հուլիսի 27-ին Ամարասում կայացած թթի ավանդական փառատոնին:

Այցից հետո 3000 տպաքանակ ունեցող reSPUBLICA ամսագրում տպագրվել է հոդված ՀՀ զբոսաշրջային արդյունքի վերաբերյալ:

2015թ. հուլիսի 4-12-ը իրականացվել է իտալական RAI պետական հեռուստառադիոընկերության ներկայացուցիչների ճանաչողական 7-օրյա շրջայցը ՀՀ: Իտալացի լրագրողները այցելել են Արարատի կոնյակի գործարան, Գառնու տաճար, Մեգերյան կարպետ գործարան, Թումո կենտրոն, Տաթև, Խնձորեսկ, այնուհետև Ստեփանավան, ՀՀ-ում Իտալիայի դեսպանատուն, Մալխաս ջազ-ակումբ: Հավաքագրված ողջ տեղեկատվության հիման վրա նկարահանվել է վավերագրական ֆիլմ, որն արդեն իսկ ցուցադրվել է:

2015 թվականի հոկտեմբերի 16-22-ը իրականացվել է ավստրիացի և գերմանացի 4 լրագրողների՝ Քրիստիան Շահինգերը (Ավստրիա), Ջուլիա Փրոսինգեր (Գերմանիա), Սաբրինա Գանդեր (Գերմանիա), Ստեֆան Շոումեն (Գերմանիա), ճանաչողական այցը Հայաստան: Եվրոպացի լրագրողները այցելել են 13-րդ դարում կառուցված Նորավանք վանական համալիր, Երևանի «Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ», Արենի գյուղի քարանձավ, որտեղ հայտնաբերվել է աշխարհի ամենահին գինեգործական համալիրը և կաշվե կոշիկը, «Տրինիտի» գինու գործարան, Գորիս, Խնձորեսկ, Հալիձոր, Տաթևի վանք, Դիլիջան և Սևան: Արդյունքում լրագրողներից յուրաքանչյուրը պարտավորվում է տպագրել առնվազն 1-ական հոդված ավստրիական Der Standart օրաթերթում և գերմանական Tagespiegel, Neue Westfälische Zeitung, Osnabrücker Zeitung, Die Zeit օրաթերթերում, Deutschlandfunk ռադիոընկերությամբ, Augsburger Allgemeine մարզային թերթում, Tageszeitung München պարբերականում, Wochenblatt Bayern թերթում:

Ներգնա զբոսաշրջությունը դեպի Հայաստան զարգացնելու նպատակով պետական-մասնավոր համագործակցության շրջանակներում Հայաստանի զարգացման հիմնադրամը JUST TRAVEL ընկերությանը ցուցաբերել է ֆինանսական աջակցություն՝ կատարված ծախսերի փոխհատուցում, 2015թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 4-ը ռուսաստանյան ամենահայտնի և ամենամեծ տուրիստական գործակալությունների ցանցի ներկայացուցիչների Հայաստան ճանաչողական այցի կազմակերպմանը: Նշված այցի նպատակն էր Հայաստանում կազմակերպել տուրիզմի զարգացմանը նվիրված միջազգային համաժողով, քննարկել Հայաստանի հետ համագործակցության հնարավոր տարբերակները, իրականացնել փորձի փոխանակում: Այցին մասնակցել են Сеть офисов продаж «Горячие туры» ցանցի տնօրենների կազմը՝ շուրջ 130 հոգի:

2 ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

2.1 Պետական աջակցություն «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման ու պահպանման» ՀԿ-ին՝ ավանդական ուտեստների մրցույթ փառատոնի կազմակերպման համար

«Ավանդական ուտեստների մրցույթ-փառատոնի» կազմակերպման համար 2015թ. սեպտեմբերի 12-ին կազմակերպվել է ավանդական ուտեստների մրցույթ-փառատոն: Մրցութային մասին մասնակցել են 20 ռեստորաններ և 7 թիմեր ՀՀ տարբեր մարզերից և Վրաստանից: Մրցույթի արդյունքում բացարձակ հաղթող է ճանաչվել Երևանի «Գարեջրի Ակադեմիա» ռեստորանը, «Լավագույն համ» անվանակարգում՝ «Ազնավուր» ռեստորանը, «Լավագույն մտահաղացում»՝ «Իբիցա» հյուրանոցային համալիրը, «Լավագույն տեսք»՝ «Լոռի թիմը»: Փառատոնին ներկա էին շուրջ 6000 մարդ Հայաստանից և արտասահմանից: Մշակութային ծրագրով հանդես են եկել «Լելո սիթի» խումբը, «The Beautified Project» խմբի հիմնադիր Անդրե Սիմոնյանը, երգչուհի Էվան, Վանաձորի «Հորովել» պարային համույթը, «Հայորդաց տան համույթը» և այլ պարային խմբեր: Միջոցառումը լուսաբանվեց հայկական և տարածաշրջանային հեռուստաընկերությունների ու էլեկտրոնային լրատվամիջոցների կողմից:

2.2 Պետական աջակցություն «Արենի» փառատոն» հիմնադրամին՝ Գինու փառատոնի կազմակերպման համար

Արենի գինու 7-րդ ավանդական փառատոնն իրականացվել է «Արենի» փառատոն» հիմնադրամի կողմից 2015թ. հոկտեմբերի 2-ին Ռինդ գյուղում և հոկտեմբերի 3-ին Արենի գյուղում:

Փառատոնի ընթացքում տեղի են ունեցել տնական գինիների ցուցահանդես-վաճառք, տարբեր անվանակարգերով մրցույթներ, խաղարկություն, երգ, պար, երաժշտություն: Փառատոնին ելույթ են ունեցել ՀՀ վաստակավոր արտիստուհի Լեյլա Սարիբեկյանը, «Արին Բերդ» և «Սասնա Ծռեր» պարային համույթները, ինչպես նաև «Վասպուրիկ» մարիոնետների թատրոնը: Արենի փառատոնին ներկայացված են եղել 11 գործարանային արտադրության և 60 ընտանեկան արտադրության գինեգործներ: Փառատոնին ներկա է եղել ավելի քան 25 000 այցելու:

2.3 Զբոսաշրջության միջազգային օրվան նվիրված տոնակատարության կազմակերպում

Մշակվել է տոնակատարության ծրագիր, որը նախապես համաձայնեցվել ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ: 2015թ. հոկտեմբերի 9-ին «Օպերա Սուիթ» հյուրանոցում անցկացվել է զբոսաշրջության միջազգային օրվան նվիրված տոնակատարություն: Տոնակատարությանը ներկա են գտնվել զբոսաշրջության արդյունաբերության պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչներ, ոլորտի մասնագետներ, բարձրաստիճան պաշտոնատար անձիք և այլ հյուրեր:

2.4 Պետական աջակցություն այլ փառատոնների ու տոնակատարությունների կազմակերպմանը

1) Մշակվել է «Սյունյաց ավանդույթներ» ամենամյա փառատոնի իրականացման տեխնիկական բնութագիրը: «Թույթ» խորագիրը կրող միջոցառումն իրականացվել է «Արենի» փառատոն» հիմնադրամի կողմից 2015թ. հուլիսի 4–ին Սյունիքի մարզի Գորիս քաղաքում: Այն հյուրընկալել է ավելի քան 4000 այցելու, իր հարկի տակ ընդունել Հայաստանից և ԼՂՀ-ից շուրջ 20 մասնակից: «Սյունիքի բարիքներ» փառատոնում առանցքային դերակատարում է ունեցել օղու թորման ավանդական մեթոդին զբոսաշրջիկներին մասնակից դարձնելու փաստը, ինչպես նաև Սյունիքի տարբեր տարածաշրջաններին բնորոշ ուտեստների պատրաստման գործընթացը:

2) Մշակութային վերածննդին նպաստող փառատոնի շրջանակում մշակվել է անհրաժեշտ տեխնիկական բնութագիր և Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում 2015թ.-ի օգոստոսի 29-ին իրականացվել է «Մշակութային վերածնունդ» խորագրով ավանդական փառատոնը «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» ՀԿ-ի կողմից: Փառատոնը տեղի է ունեցել Դիլիջան քաղաքում, որի ընթացքում տեղի են ունեցել հայկական գորգագործության, դեկորատիվ, կիրառական արվեստների ձեռքբերումների ցուցադրում, կազմակերպվել է ցուցահանդես, որը նպաստել է բոլոր շահագրգիռ կողմերի փոխշահավետ շփումներին և փորձի փոխանակմանը:

3) Մշակվել են ևս 2 ազատ թեմայով իրականացվելիք փառատոնների տեխնիկական բնութագրեր: Առաջին փառատոնը՝ «Օձունի գանձեր» խորագրով իրականացվել է «Կարի Եվրոպա» ՍՊԸ-ի կողմից 2015թ. սեպտեմբերի 12-ին Լոռվա մարզի Օձուն գյուղում:

Փառատոնը բաղկացած էր 2 հիմնական մասերից.

- Գյուղմթերքի ներկայացում և վաճառք
- Մշակութային միջոցառումներ

Միջոցառմանը ներկա են եղել մոտ 2000 այցելու:

Երկրորդ՝ Գաթայի փառատոնը, իրականացվել է «Արենի» փառատոն» հիմնադրամի կողմից Վայոց ձորի Խաչիկ գյուղում 2015թ.-ի հոկտեմբերի 10-ին: Բնակիչները հանդես եկան 20 տաղավարով, ուր ներկայացվել էին գյուղացիների բերքն ու բարիքը: Հրապարակում տեղադրված գաթան թխված էր 2,5 մ տրամագծով: Տպագրվել է Խաչիկ գյուղում կայանալիք միջոցառումների մասին 3 լեզուներով 5000 ֆլայեր, 5000 փառատոնի ծրագիր, պաստառ A2 ֆորմատի՝ 40 հատ, բաժանվել է խրախուսական դիպլոմներ տաղավարներ ներկայացնող մասնակիցներին, պարային համույթներին և երգիչներին: Բաժանվել է 250 հրավիրատոմս տարբեր միջազգային կառույցներին: Փառատոնին ներկա էին ավելի քան 1000 այցելու:

3 ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

3.1 «Պետական աջակցություն զբոսավարների միջազգային ուսումնական կենտրոնի գործունեությանը»

2015թ. հունիսի 30-ին «Հայ զբոսավարների գիլդիա» ՀԿ-ի հետ կնքվել է պայմանագիր՝ ուսումնական կենտրոնի բնականոն գործունեության ապահովման և առնվազն մեկական միջազգային և տեղական դասընթացի կազմակերպման համար, որի կատարված արդյունքներն ընդունվել են մասնակի: Արդյունքում պահանջ է ներկայացվելու ՀՀ պետական բյուջեից հատկացված ֆինանսական աջակցության միջոցների մի մասը հետ վերադարձնելու համար:

3.2 Զբոսաշրջային տների (B&B) համակարգի և մարդկային ռեսուրսների զարգացում

Մշակվել է մարդկային ռեսուրսների զարգացման սեմինարների կազմակերպման համար տեխնիկական բնութագիր: Դասընթացներն իրականացվել են «Հայաստանի Համայնքների Հանրապետական Ասոցիացիա» ՀԿ-ի կողմից Լոռու մարզի Ալավերդի քաղաքի 20 բնակիչների մասնակցությամբ: Տպագրվել է 3000 օրինակ Լոռու մարզի հյուրատների ցանկը պարունակող բուկլետներ: 10 հյուրատների ներկայացուցիչներին տրամադրվել է մասնագիտական խորհրդատվություն:

4 ՀՀ ՄՐՑՈՒՆԱԿ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԽԹԱՆՈՒՄ

Համաժողովի ընթացքում ներկայացրել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որդեգրած «Բաց երկնքի» քաղաքականության և Հայաստանի զբոսաշրջության խթանման ուղղությամբ իրականացվող քայլերը և արդյունքները, ինչպես նաև միջազգային զբոսաշրջային շուկաներին Հայաստանի ինտեգրման ընթացքը և հեռանկարները՝ օտարերկրյա փոխադրողներին դեպի Հայաստան ներգրավելու նպատակով: Մասնավորապես.

1) 2015թ. ապրիլի 12-ից 15-ը Աբերդին (Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն) մասնակցեց Եվրոպայի ուղիների զարգացում խորագրով (Routes Europe 2015) համաժողովին: Համաժողովի շրջանակներում երկկողմանի հանդիպումներ են անցկացվել Air Berlin, Brussels Airlines, Czech Airlines, Vueling Airlines, Wizz Air, Norwegian, Easy Jet և Alitalia ավիաընկերությունների հետ:

2) 2015 թ. հուլիսի 5-7-ին մասնակցել է Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում տեղի ունեցող «Routes Silk Road 2015» համաժողով. Համաժողովի շրջանակներում երկկողմանի հանդիպումներ են անցկացվել «LOT Airlines», «Air Astana», «Air Baltic», «Air China», «Air Serbia», «China Southern Airlines», «Vueling», «easyJet», «Georgian Airways 'Airzena'», «Titan Airways», «Wizz Air» ավիաընկերությունների հետ: Բանակցություններ են տարվել «Routes-ի ղեկավարության հետ «Routes CIS 2016»-ը Հայաստանում անցկացնելու վերաբերյալ: Կազմվել է համապատասխան առաջադրանք:

3) 2015թ. սեպտեմբերի 18-23-ը Դուրբան (Հարավաֆրիկյան Հանրապետություն) մասնակցել է համաշխարհային ուղիների զարգացում խորագրով 21-րդ համաժողովին (World Routes 2015). Համաժողովի շրջանակներում երկկողմանի հանդիպումներ են անցկացվել 20 ավիաընկերության ներկայացուցիչների հետ (Qatar Airways, Lufthansa, Alitalia, Norwagian, Kuwait Airways, Air India, Air China, Brussels Airways, Czech Airways, Air Arabia, Royal Jordanian Airlines, Iberia, British Airways, Vueling, Hainan Airlines, Wizz Air, Air Europa, Egypt Air, Croatian Airways, Air Baltic ընկերությունների հետ:

- Մշակվել է ավիացիայի մասին նոր օրենքի նախագիծ և ներկայացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,
- Ապահովվել է Հիմնադրամի մասնակցությունը ԵՄ Ազատ Ավիացիոն Գոտուն միանալու գործընթացին,
- Ապահովվել է Aegean հունական ավիաընկերության և Qatar Airways քաթարական ավիաընկերության մուտքը Հայաստան:

5 ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Մարքեթինգային ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացում և համապատասխան առաջարկությունների (այդ թվում զարգացման ծրագրերի վերաբերյալ) ներկայացում ՀՀ էկոնոմիկայի նախարարություն միջոցառման շրջանակներում կատարվել և շարունակվում են կատարվել մարքեթինգային հետազոտություններ, համագործակցում ենք տեղական համայնքների հետ, հավաքագրվում է մանրամասն տեղեկատվություն ՀՀ մարզերից յուրաքանչյուրի մասով /5 մարզի տեղեկատվությունը հավաքագրված է/: 22.07.2015թ. գրավոր նամակով դիմել ենք ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ առաջարկելով Ջերմուկ քաղաքի կենտրոնական այգու վերականգնումը ընդգրկել Ասիական զարգացման բանկի կողմից իրականացվող "Ջերմուկի քաղաքաշինական զագացման" ծրագրի միջոցառումների մեջ:

Մարքեթինգային ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացման միջոցառման շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքում նպատակահարմար է սահմանվել իրականացնել նպատակաուղղված քաղաքականություն Ռուսաստանյան շուկայի ներգրավման համար: Այդ միջոցառումների համար Հիմնադրամի կողմից մշակվել և քննարկման է ներկայացվել «Պետական աջակցություն 2016-2017 թվականների ռուսաստանյան զբոսաշրջային շուկայում Հայաստանի առավել արդյունավետ մարքեթինգի և խթանման միջոցառումների» գործողությունների ծրագիր:

ԳԼՈՒԽ III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԳԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԳԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԶՀ կողմից ներդրումների ներգրավման գծով իրականացվել են մի շարք ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ ներկա իրավիճակի գնահատում, ոլորտների թիրախավորում և ոլորտային ռազմավարությունների մշակման դյուրացնում, մասնավորապես.

1.1 Արտահանման և ներկրման ցուցանիշների ուսումնասիրություն

Ոլորտներում և պետություններում պոտենցիալ ներդրումների թիրախավորման շրջանակներում աշխատանքներ են իրականացվել 2010-2015թթ ՀՀ արտաքին առևտրաշրջանառության՝ արտահանման և ներկրման տվյալների հավաքագրման և մշակման ուղղությամբ, մասնավորապես՝ արտահանման և ներկրման ցուցանիշներն ըստ պետությունների և ոլորտների, վերջին երկու տարիների ընթացքում արտահանման ցուցանիշների աճն ու նվազումն ըստ ապրանքատեսակների և ապրանքախմբերի: Հավաքագրվել են նաև ԵՄ-Ռուսաստան առևտրաշրջանառության տվյալները և վերլուծվել է տվյալների դինամիկան՝ ՀՀ-ում առավել արտահանման պոտենցյալ ունեցող ներդրումների թիրախավորման նպատակով: Արդյունքում պարզվել է որ Հայաստանի հիմնական առևտրային գործընկերներն են Ռուսաստանը, Գերմանիան և Չինաստանը, իսկ ապրանքատեսակներից հիմնականում արտահանվել են հանքանյութեր, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, սննդարդյունաբերական ապրանքներ:

1.2 Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ուսումնասիրություն

Պոտենցյալ ունեցող պետությունների և ոլորտների բացահայտման և թիրախավորման շրջանակներում հավաքագրվել և մշակվել են 2010-2015թթ ՀՀ-ում օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) վերաբերյալ տվյալներ, մասնավորապես՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների ցուցանիշներն ըստ ներդրող պետությունների և ըստ ներդրումներ ստացած

ոլորտների: Ուսումնասիրվել են նաև ոլորտային զարգացումները և զարգացման միտումները: Արդյունքում ունենք հետևյալ պատկերը.

1.3 Ոլորտային ուսումնասիրություններ

ա) էներգետիկայի ոլորտի ուսումնասիրություն

Էներգետիկայի ոլորտում ներդրումային պոտենցիալի բացահայտման շրջանակներում, հավաքագրվել են ոլորտի ներկա վիճակի, առկա հնավորությունների, վերականգնվող էներգետիկայի տարբեր ճյուղերի զարգացման հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որի հիման վրա պատրաստվել են վերականգնվող էներգետիկայի վերաբերյալ երկու շնորհանդեսին նյութ՝ ընդգրկուն և համառոտ: Առաջինում ներառված են տվյալներ ոլորտի կառուցվածքի, առկա վիճակի, բանական հնարավորությունների, իրավական դաշտի ինչպես նաև ոլորտի զարգացման խթանների և խոչընդոտների վերաբերյալ: Համառոտ տարբերակը ներառում է նաև ՀՀ կառավարության կողմից հաստատված 3 հիմնական ներդրումային ծրագրերի նկարագրությունը, տեխնիկական և ֆինանսական բնութագրերը:

1.4 բ) Կաշեգործության ոլորտի ուսումնասիրություն

Ոլորտային ուսումնասիրությունների և ներդրումային հնարավորությունների բացահայտման շրջանակներում կազմակերպվել են անհատական հանդիպումներ Հայաստանում կաշեգործության ոլորտի հետևյալ ընկերությունների հետ՝ Քրիստոբադ, Էլեն-93, Ավա Շուզ, Ռոբերտո Պիրալոֆֆ, Մաքսոլ, Լյուքս, Տիզա և Լ.Կ.Ռ.: Կազմվել են ընկերությունների համառոտ բնութագրերը, տեղեկություններ են հավաքագրվել ներկա արտադրական ծավալների, օտարերկրյա համագործակցությունների, դրանց պոտենցիալի և պատրաստակամության վերաբերյալ: Հայաստանի զարգացման հիմնադրամը աշխատանքներ է տանում նշված ոլորտի ռազմավարության մշակման ուղղությամբ, սերտորեն համագործակցելով ոլորտի ընկերությունների հետ:

1.5 Տարածաշրջանում Հայաստանի վարկանիշի համեմատական ուսումնասիրությունը

Տարածաշրջանի պետությունների համեմատ մրցակցային առավելությունների ուսումնասիրության շրջանակներում աշխատանքներ են իրականացվել միջազգային

հեղինակավոր հրատարակչությունների, համալսարանների, հիմնադրամների և կազմակերպությունների կողմից թողարկվող վարկանիշային ինդեքսների հավաքագրման, մշակման և ցուցանիշների հետ համեմատական վերլուծության ուղղությամբ, մասնավորապես՝ Համաշխարհային բանկի խմբի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) կողմից հրապարակվող «Գործարարությամբ զբաղվելու դյուրինության ինդեքս», Հերիթիջ հիմնադրամ՝ Ուոլ Սթրիթ օրաթերթի հետ (Heritage Foundation&Wall Street Journal) -- «Տնտեսական ազատության ինդեքս 2015» Համաշխարհային տնտեսական համաժողովի (World Economic Forum) կողմից հրապարակվող «Համաշխարհային առևտրի խթանման ինդեքս», Բերթելսման հիմնադրամ (Bertelsmann Foundation) – «Ժողովրդավարության և շուկայական տնտեսության կարգավիճակի ինդեքս 2014», ՄԱԿ-ի զարգացման ծրագիր (UNDP) -«Մարդկային ներուժի զարգացման ինդեքս 2014» (2013թ. տվյալներով), Համաշխարհային տնտեսական համաժողով (World Economic Forum) - «Համաշխարհային մրցունակության ինդեքս 2014/2015» (2012-2013թթ. տվյալներով), Ֆրիդոմհաուզ (Freedomhouse) - «Ազատությունը աշխարհում»՝ «Քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների բարեփոխումների ինդեքս 2015» (2014թ. տվյալներով), և այլն: Հավաքագրման արդյունքում ստացած տեղեկություններից հետևում է, որ ըստ մի շարք հեղինակավոր ինդեքսների Հայաստանը գտնվում է բարենպաստ դիրքում համեմատած տարածաշրջանի պետությունների հետ:

1.6 «Հայաստանի ներդրումային նկարագիր» շնորհանդես

Պատրաստվել է «Armenia Investment Profile» (Հայաստանի Ներդրումային Նկարագիր) շնորհանդեսային նյութը, որում ներառված են Հայաստանի և Երևանի համառոտ նկարագրերը, Հայաստանի համառոտ պատմությունը, մակրոտնտեսական ցուցանիշները, օրենսդրական դաշտի նկարագրությունը, ներդրումների խթանները, գյուղատնտեսության և սննդի վերամշակման, ոսկեգործության և ժամագործության, զբոսաշրջության, առողջապահության, վերականգնվող էներգիայի ոլորտների համառոտ նկարագրությունները, դրանցում առկա ներդրումային և զարգացման հնարավորությունները և այլն: Նյութի նպատակն է պոտենցյալ ներդրողին առավել հասկանալի կերպով ներկայացնել Հայաստանի ներդրումային հնարավորությունները:

1.7 Հայաստանի օտարերկրյա ներդրողների տվյալների բազայի ստեղծում

Պատրաստվում է ՀՀ-ում օտարերկրյա ներդրողների համապարփակ ցանկ, որի համար հիմք են հանդիսացել ՄՖԿ-ի, Բիզնես ֆրանսի, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՎԶԵԲ-ի, ՀԶԳ-ի, ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայի և այլ կառույցների կողմից տրամադրված ցանկերը: ՀԶՀ ցանկը ներառում է մանրամասն տեղեկատվություն օտարերկրյա ընկերությունների վերաբերյալ, որը հիմք կհանդիսանան տվյալների բազայի ադմինիստրատոր (CRM) համակարգի արդյունավետ գործարկման համար:

1.8 Հայաստանի գյուղատնտեսության վերաբերյալ բրոշուրի պատրաստում

Գյուղատնտեսության ոլորտի ներդրումային հնարավորությունների ուսումնասիրության շրջանակներում պատրաստվել է ՀՀ գյուղատնտեսության ոլորտի վերաբերյալ բրոշուրի նյութը, որը պարունակում է ոլորտի վիճակագրությունը, սննդի վերամշակման հատվածի նկարագրությունը, արտահանման քաղաքականության և առևտրի աջակցության մասին տեղեկատվություն, Ռուսաստանի Դաշնության սննդի վերամշակման շուկայի ուսումնասիրություն, Հայաստանյան արտադրանքի հնարավորությունները Ռուսաստանի Դաշնության շուկայում:

2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԶՀ կողմից ստորագրվել են մի շարք ռազմավարական նշանակություն ունեցող պայմանագրեր և փոխըմբռնման հուշագրեր, մասնավորապես.

2.1 Փոխըմբռնման հուշագիր ՀԶՀ և ԵՆԲ միջև

Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում Եվրոպական Ներդրումային բանկի (ԵՆԲ) գլխավոր քարտուղարի և Հայաստանի զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի կողմից 2015.թ. հունիսի 12-ին ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ ԵՆԲ և Հայաստանի զարգացման հիմնադրամի միջև:

Փոխըմբռնման հուշագրի ստորագրմամբ կողմերը վերահաստատում են իրենց հետաքրքրությունն ու կամքը Հայաստանի և Եվրոպական ներդրումային բանկի միջև համագործակցությանը նոր որակ ու բովանդակություն հաղորդելու վերաբերյալ, հայտնում իրենց մտադրությունը բացելու նոր հնարավորություններ ներդրումային ծրագրերի մշակման և ներդրումների ներգրավման, ներքին և արտաքին ֆինանսական աջակցությամբ

իրականացվող ծրագրերի համաֆինանսավորման, տեխնիկական օժանդակության, արտահանման դիվերսիֆիկացման և աշխատատեղերի ստեղծման համար:

2.2 Փոխըմբռնման հուշագրեր ՀՌՀ և բելգիական կազմակերպությունների միջև

2015 թվականի հուլիսի 8-ին Հիմնադրամը Բրյուսելում ՀՀ դեսպանատանը համագործակցության և փոխըմբռնման հուշագրեր է ստորագրել Վալոնիայի արտահանման և ներդրումների գործակալության (AWEX), Վալոնիայի ձեռնարկությունների միության (UWE) և Բրյուսելի առևտրի պալատի հետ՝ ուղղված ներդրումային ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, ներքին և արտաքին ֆինանսական աջակցությամբ իրականացվող ծրագրերի համաֆինանսավորմանը, տեխնիկական օժանդակությանը, արտահանման դիվեսիֆիկացմանն ու աշխատատեղերի ստեղծմանը:

2.3 ԵՄ Թվինինգ ծրագիր

2015թ. հոկտեմբերի 15-ին մեկնարկել է «Ներդրումների խթանման և ներդրումների քաղաքականության ինստիտուցիոնալ համակարգի հզորացման» Թվինինգ ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որի ուղղակի շահառուներն են ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը և Հայաստանի զարգացման հիմնադրամը: Եվրամիության՝ Հայաստանին աջակցության ծրագրի շրջանակներում, ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը և Բիզնես Ֆրանս կազմակերպությունը կնքել են «Ներդրումների խթանման և ներդրումային քաղաքականության ինստիտուցիոնալ համակարգի հզորացման" Թվինինգ ծրագրի պայմանագիրը: Ծրագրի հիմնական նպատակն է օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) խթանման միջոցով աջակցել Հայաստանում տնտեսական աճի տեմպերի զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը, ինչպես նաև նորարարությունների և տեխնոլոգիաների փոխանցմանը:

Թվինինգն ունի 3 բաղադրիչ.

- ✓ հետներդրումային ծառայությունների զարգացում,
- ✓ ՕՈՒՆ ռազմավարության զարգացում և ներդրումային միջավայրի բարելավում,
- ✓ ներդրումային քաղաքականության պաշտպանություն/աջակցություն:

ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակներում տեղի են ունեցել Բիզնես Ֆրանս ընկերության 10 առաքելություն դեպի Հայաստան: Առաքելությունների շրջանակում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

✓ Միջազգային մասնագետների կողմից ներկայացվել են Եվրամիության անդամ պետությունների հետներդրումային ծառայությունների լավագույն փորձը: Արդյունքում Հայաստանի զարգացման հիմնադրամի ՀՀ Էկոնոմիկայի Նախարարության աշխատակիցները ծանոթացան փորձին, ինչպես նաև մասնակցեցին վերապատրաստմանը՝ հետներդրումային ծառայությունների կարևորությունը հասկանալու և արդյունավետ հետներդրումային ծրագրեր իրականացնելու նպատակով:

✓ Ներկայացվել են Եվրամիության լավագույն փորձը քաղաքականության պլանավորման մասով՝ առանձնակի ուշադրություն դարձնելով ազգային ՕՈՒՆ ռազմավարության զարգացմանը՝ քաղաքականության մշակման հմտությունների աշխատաժողովների կազմակերպման միջոցով: Արդյունքում ՀՋՀ և ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը ներկայացվեց շնորհանդեսային նյութ վերոնշյալի վերաբերյալ:

✓ Գնահատվել են Հայաստանի զարգացման ուղղությունները և նպատակները, օտարերկրյա ուղղակի ներդրումներ ընդունելու ներուժը, վերլուծվել են ներկայիս համաշխարհային և տարածաշրջանային ՕՈՒՆ տենդենցները: Ուսումնասիրությունների արդյունքում կազմվել են հաշվետվություններ վերոնշյալ նյութերով, որոնք պարունակում են նաև առաջարկներ և խորհուրդներ ՀՋՀ ներդրումային արշավների ուղղվածության վերաբերյալ:

✓ Վերանայվել են տեղի տնտեսության վրա ՕՈՒՆ ազդեցության չափման և մոնիտորինգի գոյություն ունեցող մեթոդոլոգիաները, փորձագետների կողմից ներկայացվել են ԵՄ անդամ պետությունների լավագույն փորձը, աշխատանքներ են տարվել Հայաստանի ՕՈՒՆ ազդեցության չափման և մոնիտորինգի համակարգերի վերանախագծման ուղղությամբ: Արդյունքում կազմվել է հաշվետվություն, որում վերանայվում են վերոնշյալ մեթոդոլոգիաները:

✓ Փորձագետների օգնությամբ ստեղծվել է օտարերկրյա ուղղակի ներդրումների տվյալների բազայի ձևաչափ և, օգտագործելով լավագույն միջազգային փորձը, աշխատանքներ են իրականացվել օտարերկրյա ներդրողներին ուղարկվող հարցաշարերի մշակման և տեղեկատվության հավաքագրման ուղղությամբ: Հարցաշարի ուղարկումը և արդյունքների ամփոփումը նախատեսվում է 2016թ.-ի առաջին կիսամյակում:

✓ Աշխատաժողով է կազմակերպվել ՀԶՀ, ՀՀ ԷՆ և Բիզնես Ֆրանց ընկերության փորձագետի մասնակցությամբ՝ ԵՄ անդամ պետությունների ներդրումների խթանման գործակալությունների վարած ներդրումային արշավների լավագույն փորձի վերաբերյալ: Աշխատանքներ են տարվել ՀԶՀ աշխատակիցների համար ներդրումների խթանման ուղեցույցի պատրաստման ուղղությամբ: Արդյունքում ներկայացվել է շնորհանդես լավագույն փորձի վերաբերյալ: Ներդրումների խթանման ուղեցույցի վերջնական տարբերակի մշակումը նախատեսված է 2016թ.-ի երկրորդ կիսամյակում:

✓ Ներկայացվել է ԵՄ անդամ պետությունների ներդրումների խթանման գործակալությունների լավագույն փորձը ՕՈՒՆ ներկայացման մասով: Արդյունքում կազմվել է շնորհանդեսային նյութ:

✓ Փորձագետները նաև հանդիպումներ են ունեցել Հայաստանում օտարերկրյա ներդրողների, դոնորների, միջազգային կազմակերպությունների հայաստանյան գրասենյակների, մասնավոր ընկերությունների և պրոֆեսիոնալ միությունների հետ: Հանդիպումների արդյունքում միջազգային փորձագետները կարողացել են առավել ճշգրիտ գնահատել ներկա իրավիճակը և կառույցների միջև համագործակցության արդյունավետությունը, որն օգնում է մշակել առավել արդյունավետ զարգացման ռազմավարություն:

✓ Թվինինգ ծրագրի շրջանակում 2015թ. դեկտեմբերի 14-18-ը կայացել է ուսուցողական այց Բիզնես Ֆրանսի գրասենյակ Փարիզում և տարածքային զարգացման գործակալություն Մարսելում: Այցի ընթացքում հանդիպումներ և գործնական աշխատանքներ են եղել Բիզնես Ֆրանսի ներդրողների աջակցման, ներդրումային ծրագրերի կառավարման, CRM համակարգի, ներդրողների թիրախավորման բաժնի աշխատակիցների հետ: Ուսումնասիրվել են հաջողված պատմությունները և ներդրողների թիրախավորման և աջակցման լավագույն փորձը: Այցի շրջանակում հանդիպումներ են եղել Ֆրանս-հայկական առևտրաարդյունաբերական պալատի նախագահի և պալատի անդամ մի շարք գործարարների հետ Մարսելում: Հանդիպման ընթացքում նախանշվել է ռազմավարական որոշման կայացման փուլում գտնվող Հայաստանում SS ուղղվածության մեկ ներդրումային նախագիծ և պայմանավորվածություն է ձեռք բերվել դրա հետագա ներդրումային աջակցության հարցում:

3. Ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագիր

Հայաստանի զարգացման հիմնադրամը՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ, իրականացում է «Ներդրումային միջավայրի բարեփոխումների» ծրագիրը, որի շրջանակում իրականացվելու են օրենսդրական բարեփոխումներ, օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ռազմավարության մշակում, ներդրումների խրախուսում և խթանում, բողոքներին արձագանքելու մեխանիզմների հիմնում:

4. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀՋՀ-ը ներդրումների տնօրինությունը կազմակերպել և աջակցել է մի շարք պատվիրակությունների այցելություններին Հայաստան, ինչպես նաև ՀՋՀ-ի պատվիրակությունները մասնակցել է մի շարք ռազմավարական նշանակություն ունեցող միջոցառումների և հանդիպումների, մասնավորապես.

4.1 KGK ընկերության այց

2015թ. օգոստոսի 17-ից 21-ը Հայաստան էին ժամանել Հնդկաստանի Հանրապետությունից ՔԵՅ-ՋԻ-ՔԵՅ (KGK) ոսկերչական և ադամանդագործական ընկերության պատվիրակությունը, որոնք ցանկություն ունեին ներդրումներ իրականացնել Հայաստանում:

Հիմնադրամի կողմից կազմակերպվել է այցելություն «Մերիդիան» ոսկերչական ԱՏԳ, որտեղ հյուրերը ծանոթացան արտադրության կազմակերպման, այդ թվում հումքի ներմուծման և պատրաստի արտադրանքի արտահանման հնարավորություններին: Քննարկվեցին այլ ընթացիկ հարցեր: Բանակցությունների հաջող ընթանալու դեպքում նախատեսվում է ստեղծել շուրջ 1000 նոր աշխատատեղեր:

4.2 Մարկ Լևենսի այց

2015 թվականի հուլիսի 16-20-ը կազմակերպվել է բելգիացի գործարար Մարկ Լևենսի ճանաչողական այցը Հայաստան՝ ալկոհոլային խմիչքները արտադրության ոլորտին ծանոթանալու նպատակով: Մասնավորապես, կազմակերպվել է գործարարի այցը «Շահնազարյան» ԳԿՏ, «Մանչո Գրուպ», «Նոյ» գինու կոնյակի գործարան, «Արարատի Աբրիկոն» և «Աստղունք» ընկերություններ, որտեղ նա ծանոթացել է արտադրական

գործընթացին, արտահանման պայմաններին և հնարավորություններին: ՀՀՀ-ի կողմից նաև ցուցաբերվել է աջակցություն՝ այլ ընկերությունների հետ կապեր հաստատելու հարցում: Աշխատանքների և հետամուտ աշխատանքների արդյունքում գործարարի և որոշ արտադրողների միջև ձեռք են բերվել նախնական համաձայնություններ՝ ապրանքների արտահանման վերաբերյալ:

4.3 UWE-ի պատվիրակության այց Հայաստան

2015թ. օգոստոսի 3-ից 6-ը կազմակերպվել է Վալոնիայի ձեռնարկությունների միության (UWE) պատվիրակության այցը Հայաստան՝ հանքարդյունաբերության և ցեմենտի ոլորտներին ծանոթանալու և համագործակցություններ հաստատելու նպատակով: Կազմակերպվել է բելգիական պատվիրակության այցը «Գեոպրոմայնինգ Գոլդ» Արարատի ոսկու հանք և գործարան, Արարատի ցեմենտի գործարան, Հրազդանի ցեմենտի գործարան (Միկա ցեմենտ) և Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ: Նշված ձեռնարկություններում տեղի են ունեցել հանդիպումներ ղեկավար անձնակազմերի հետ, ինչպես նաև արվել է Վալոնիայի Կազմակերպությունների Միության շնորհանդես:

4.4 Հայ-Լեհական գործարար համաժողով

ՀՀՀ-ի ներկայացուցիչներ մասնակցել են ՀՀ Առևտրաարդյունաբերական պալատի և Հայաստանում Լեհաստանի դեսպանատան կազմակերպած գործարար համաժողովին Երևանում, ներկայացրել Հայաստանի ներդրումային հնարավորությունները, հաստատվել են կապեր համաժողովի մասնակից լեհական ընկերությունների հետ:

4.5 ՎԶԵԲ ամենամյա 24-րդ հանդիպում

ՀՀՀ-ի պատվիրակությունը մասնակցել է Վրաստանում, քաղաք Թբիլիսիում 2015թ մայիսի 14-15-ը կայացած Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի 24-րդ ամենամյա հանդիպմանը, ներկայացրել Հայաստանի ոլորտային ուսումնասիրությունները և ներդրումային հնարավորությունները:

4.6 Հայ-չեխական գործարար համաժողով

Հայաստանի Հանրապետության վարչապետ Հովիկ Աբրահամյանի Չեխիայի Հանրապետություն պաշտոնական այցի շրջանակներում հունիսի 2-ին Պրահայում մեկնարկվեց հայ-չեխական գործարար համաժողովը, որը կազմակերպվել էր ՀՀՀ-ի և

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության կողմից: Միջոցառմանը ներկա էին ավելի քան 150 գործարարներ Հայաստանից և Չեխիայից:

Բացման խոսքով հանդես եկան Հայաստանի Հանրապետության վարչապետ Հովիկ Աբրահամյանն ու Չեխիայի Հանրապետության վարչապետ Բոհուսլավ Սոբոտկան, ովքեր իրենց խոսքում կարևորեցին հայ-չեխական կապերի և տնտեսական հարաբերությունների ակտիվացումն ու զարգացման հեռանկարները: Հայաստանի Զարգացման Հիմնադրամի կողմից ներկայացվեց Հայաստանի տնտեսության ներկա ներուժն ու ներդրումային հնարավորությունները:

4.7 «Համագործակցության հնարավորությունները Հայաստանի և Բելգիայի միջև» գործարար համաժողով

Հայաստանի զարգացման հիմնադրամի նախաձեռնությամբ 2015թ. հունիսի 10-ին Բրյուսելում (Բելգիայի թագավորություն) կազմակերպվեց «Համագործակցության հնարավորությունները Հայաստանի և Բելգիայի միջև» գործարար համաժողովը, որին մասնակցում էին 45 բելգիական ընկերությունների ներկայացուցիչներ: Բելգիացի գործարարները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել համաժողովի նկատմամբ՝ պայմանավորված ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությամբ՝ Հայաստանը դիտարկելով որպես կամուրջ դեպի Եվրասիական տնտեսական միության շուկա:

Հայաստանի զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Արման Խաչատուրյանը «Նոր հնարավորություններ Արևելքի և Արևմուտքի խաչմերուկում» թեմայով իր շնորհանդեսում բելգիացի գործարարներին ներկայացրել է Հայաստանի գործարար մթնոլորտի գրավչությունը, ներդրումային հնարավորությունները և համագործակցության հեռանկարները:

4.8 Նյու Յորքում Հայաստանին նվիրված «Գլոբալ ներդրումային համաժողով 2016»

Հայաստանի Զարգացման հիմնադրամն նախապատրաստական աշխատանքներ է իրականացնում 2016 թվականին ԱՄՆ-ում, Նյու Յորք քաղաքում կայանալիք Հայաստանին նվիրված «Գլոբալ ներդրումային համաժողով 2016»-ին պատշաճ մասնակցությունն ապահովելու համար: Այս ծրագրի շրջանակներում Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) հետ ձեռք է բերվել համաձայնություն՝ համաժողովի նախապատրաստական աշխատանքների իրականացման համար 750 հազար ԱՄՆ դոլար դրամաշնորհի տրամադրման վերաբերյալ:

Այդ գումարով նախատեսված է վարձել համաժողովի բովանդակության համար պատասխանատու խորհրդատվական կազմակերպություն և համաժողովների մասնագիտացված կազմակերպիչ ընկերություն/ներ: ԱՁԲ-ի հետ բանակցվել է նաև համաժողովի համար ձեռքբերվելիք տվյալների բազայի ադմինիստրատոր (CRM) համակարգի ստեղծման օժանդակությունը, որի համար գրվել են տեխնիկական առաջադրանքներ:

4.9 Կալուգաի բիզնես առաքելության այց

ՌԴ Կալուգաի շրջանի բիզնես առաքելության այցի շրջանակում տեղական ընկերությունների հետ ձեռք են բերվել համագործակցության պայմանավորվածություններ:

4.10 KOTRA-ի հետ հանդիպում

Կազմակերպվել է հանդիպում կորեական առևտրի խթանման գործակալության՝ KOTRA-ի (Կոտրա) հետ: Հանդիպման ընթացքում ձեռք է բերվել նախնական համագործակցության համաձայնություն, ինչպես նաև համատեղ ներդրումների ներգրավման միջացառումներ կազմակերպելու պայմանավորվածություն

4.11 ORIO-ի հետ հանդիպում

Կազմակերպվել է հանդիպում Հոլանդական Կառավարության օժանդակության ծրագրերի (ORIO, այժմ DRIVE) կոորդինատոր Մայա Տոդրիայի հետ: Հանդիպման ընթացքում վերջինս ներկայացրել է համագործակցության համար հասանելի ծրագրերը և նրանց բնութագրերը, քննարկվել են հնարավոր համագործակցության եզրերը:

4.12 Բուլղարիայի պատվիրակության այցը

2015թ.-ի հոկտեմբերի 27-ին ՀԶՀ-ը ձեռնարկեց հանդիպում Հայաստան ժամանած Բուլղարիայի կահույքի ոլորտի ընկերությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին գործընկերներ գտնելու հնարավորությունները, ինչպես նաև ներկայացվեց Հայաստանը՝ որպես ներդրումներ կատարելու բարենպաստ վայր:

4.13 VLAM-ի այց և B2B հանդիպումներ

2015թ.-ի դեկտեմբերի 7-10-ը ԵՄ առևտրային ներկայացուցչության հետ համատեղ կազմակերպվել է Բելգիայի Ֆլանդերս տարածաշրջանի գյուղմթերքների մարքեթինգի խորհրդի (VLAM) արտահանման գծով ներկայացուցչի այցը: Այցի շրջանակում խորհրդատուն հանդիպումների ունեցավ թարմ և սառեցված մսի, մրգի և բանջարեղենի, դեկորատիվ

բույսերի ու ծառերի ներմուծմամբ զբաղվող հայաստանյան ընկերությունների հետ: Ձեռք են բերվել համագործակցության նախնական պայմանավորվածություններ, որոնք հիմք կհանդիսանան հաջորդ՝ B2B ձևաչափով հանդիպման համար, որը Ֆլանդերսի գյուղմթերքների մարքեթինգի խորհուրդը պատրաստվում է իրականացնել 2016թ. ընթացքում: Նախնական պայմանավորվածությամբ՝ B2B ձևաչափով հանդիպմանը Հայաստանում կմասնակցեն շուրջ 15 բելգիական ընկերությունների ներկայացուցիչներ:

4.14 Հանդիպում իրանցի գործարարների հետ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատում

2015 թ. սեպտեմբերի 14-ին Հիմնադրամը իրանից ժամանած գործարարների հետ հանդիպմանը ներկայացրել է ՀՀ ներդրումային և գործարար միջավայրի, Հիմնադրամի հիմնական գործառույթների և ներդրողների աջակցման ուղղությունների վերաբերյալ: Հանդիպմանը մասնակցել են շուրջ 100 իրանցի գործարար:

4.15 Հայ-Իրանական գործարար համաժողով Հայաստանում

2015թ. հոկտեմբերի 15-ին Իրանի առաջին փոխնախագահի այցի շրջանակներում Հիմնադրամը Երևանում կազմակերպել է Հայաստան-Իրան գործարար համաժողով, որին մասնակցել է 300-ից ավելի գործարար Հայաստանից և Իրանից:

4.16 Հայ-Իրանական գործարար համաժողով Իրանում

2015թ. նոյեմբերի 9-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարի այցի շրջանակներում ՀՀՀ-ն Թեհրանում կազմակերպել է Հայաստան-Իրան գործարար համաժողով, որին մասնակցում էին ավելի քան 280 իրանական և հայ գործարարներ: Միջոցառմանը ակտիվ ներգրավված էր նաև հայ համայնքը:

Գործարար համաժողովի շրջանակներում տեղի ունեցան 200-ից ավելի երկկողմ /B2B/ հանդիպումներ՝ SS, ճշգրիտ ճարտարագիտության, ոսկերչության, սննդի վերամշակման, գյուղատնտեսության, շինարարության և շինանյութի, տրանսպորտային և լոգիստիկ ծառայությունների, բանկային և խորհրդատվական, հանքաարդյունաբերության և այլ ոլորտները ներկայացնող հայ և իրանցի գործարարների միջև:

Միջոցառման արդյունքում.

- ✓ Երկու երկրների արտահանման ապահովագրության գործակալությունների միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ արտահանման գործընթացը խթանելու նպատակով,
- ✓ Ոսկերչության ոլորտի ընկերությունները ստացան տվյալ բնագավառը կարգավորող իրավական դաշտի՝ այդ թվում ներքին կանոնակարգերի վերաբերյալ համապարփակ պատկերացում: Ընկերությունները եզրահանգել են, որ իրենց արտադրանքը մրցունակ է իրանական շուկայում: Նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել Թեհրանում ոսկերչական նմուշների ցուցադրության կազմակերպման շուրջ,
- ✓ ՏՏ ոլորտի ներկայացուցիչներն իրանական ընկերությունների հետ հանդիպումների ընթացքում ձեռք են բերել մի շարք պայմանավորվածություններ, մասնավորապես, ոլորտում ինֆորմացիոն կառավարման համակարգերի ծառայությունների մատուցման և հայկական պլանշետների ու հեռախոսների արտահանման հնարավորությունների քննարկման ուղղությամբ,
- ✓ Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ ՌԱՈ Մարս գործարանի տարածքում գտնվող ԱՏԳ-ում պլաստիկ պալետների արտադրություն հիմնման մասով: Իրանից արդեն իսկ ուղարկվել են նմուշներ: Աշխատանքներ է տարվում մեկ այլ իրանական ընկերության հետ, որը հետաքրքրված է ԱՏԳ-ում հիմնել հաստոցների հավաքմամբ զբաղվող ընկերություն: Նշենք, որ իրանական ընկերության ներկայացուցիչը արդեն իսկ այցելել է Հայաստան,
- ✓ Ներկայումս աշխատանքներ է տարվում իրանական ընկերության հետ «Մերիդիան» ոսկերչական ազատ տնտեսական գոտում գործունեություն ծավալելու ուղղությամբ,
- ✓ Հանքարդյունաբերության ոլորտի հայկական ընկերություններից մեկը համագործակցում է իրանական ընկերության հետ, որը նախատեսում է գնել պղնձի խտանյութ: Իրանական ընկերության ներկայացուցիչներն առաջիկայում կայցելեն Հայաստան՝ տեղում համագործակցության հնարավորությունները քննարկելու համար,
- ✓ Հայկական մեկ ընկերություն ստացել է հակակարկտային համակարգերի և անձրևային տեղումները խթանող համակարգերի մշակման 5-6 պատվեր՝ Իրանի տարբեր նահանգներում կիրառելու նպատակով,

- ✓ Բանակցություն է տարվում իրանական կազմակերպության հետ՝ կենցաղային կեղտաջրերի մաքրման հայկական արտադրության կայանների ձեռք բերման ուղղությամբ,
- ✓ Լոգիստիկայի բնագավառի ընկերություններից մեկը համաժողովի շրջանակներում իրանական բեռնափոխադրող ընկերությունների հետ քննարկել է դեպի Իրան արտահանման հնարավոր խոչընդոտները, Հայաստանը որպես տրանզիտային գոտի օգտագործելու հնարավորությունները, ինչպես նաև Իրանից ներմուծումների պարագայում ընկերության մաքսային տերմինալի հնարավորությունները: Սպասվում է համատեղ բեռնափոխադրումների իրականացման պայմանագրերի կնքում, ԵԱՏՄ և ԵՄ անդամ երկրների բեռների դեպի Իրան տեղափոխման ու դեպի ԵԱՏՄ և ԵՄ անդամ երկրներ արտահանման համար:

4.17 Չինաստանի պատվիրակության այց

2015թ.-ի նոյեմբերի 11-ին տեղի ունեցավ Չինաստանի Ֆուցզյան նահանգի Արտաքին գործերի գրասենյակի գլխավոր տնօրենի տեղակալ Լի Հոնգի և նրա գլխավորած պատվիրակության այցը Հայաստան: Պատվիրակության կազմում ընդգրկված էին գործարարներ ջրերի մաքրման, էներգետիկայի ոլորտի, դեղագործական, թեյի արտադրության, էլեկտրոնիկայի ոլորտների ընկերությունների և ներդրումային խոշոր կազմակերպության ղեկավարներ:

Հանդիպման ընթացքում չինական պատվիրակությանը ներկայացվել է Հայաստանի գործարար միջավայրը և ներդրումային հնարավորությունները: Քննարկումների ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձվել ջրի մաքրման կայանների կառուցման, վերականգնվող էներգետիկայի, շինարարության, էլեկտրոնիկայի ոլորտներին:

Հանդիպման արդյունքում փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել Արթիկի քաղաքապետարանի և Ֆուցզյանի ազգային ասոցիացիայի միջև:

4.18 Հնդկական պատվիրակության այց

2015թ. նոյեմբերի 28-ին Հայաստանի զարգացման հիմնադրամը՝ Հնդկաստանի «Արդյունաբերողների և առևտրի պալատի ֆեդերացիայի» և Հնդկաստանում ՀՀ դեսպանության հետ համատեղ, կազմակերպեց հնդիկ գործարարների պատվիրակության այցը Հայաստան:

Պատվիրակության կազմում ընդգրկված էին տարբեր ոլորտների ընկերությունների ներկայացուցիչներ, որոնք B2B ձևաչափով հանդիպումներ ունեցան հայաստանցի գործընկերների հետ, ծանոթացան Հայաստանում ներդրումային միջավայրին և հնարավորություններին:

5. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հայաստանի զարգացման հիմնադրամն աջակցություն է ցուցաբերել որոշ ներդրումային ծրագրերի, ինչպես նաև բանակցություններ է վարում տարբեր փուլերում գտնվող ներդրումային ծրագրերի հետ.

5.1 Դեղագործության ոլորտում հայ-շվեցարական ծրագիր

Մեկնարկել է «ԱՋԱԴ Ֆարմասյութիքլ Ինգրեդիենթս AG» ներդրումային ծրագիրը՝ հայ-շվեցարական համագործակցության շրջանակներում:

Հիմնադրվել է նորագույն սարքավորումներով հագեցած և ՊԱԳ պահանջներին բավարարող լաբորատորիան: Ներդրումների ծավալը՝ 10 մլն եվրո, աշխատատեղերի քանակը՝ 70:

Իրականացվում է նոր դեղամիջոցների հումքի մշակման հետազոտության 5 ծրագիր (ինտելեկտուալ սեփականություն)՝ ընդհանուր 2 մլն ԱՄՆ դոլարի չափով, որոնք առաջիկայում կտրամադրվեն պատվիրատուներին:

5.2 Արևային մոդուլների արտադրություն ծրագիր

Մեկնարկել է լիտվական «Գլոբալ Բոդ Գրուպ» և հայկական «Սիմարտեկ» ընկերությունների կողմից ՀՀ-ում արևային վահանակների արտադրության կազմակերպման ծրագիրը:

Ընդհանուր ներդրումների ծավալ՝ 10 մլն եվրո:

5.3 «Զեոլիտ Պրո» ներդրումային ծրագիր

Կազմակերպվել է բնական ցեոլիտից մանրեցված արտադրատեսակների արտադրություն՝ գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտներում օգտագործելու համար:

Ներդրումների ծավալը 1 մլն ԱՄՆ դոլար, աշխատատեղերի քանակը 12:

5.4 Միջուկային բժշկության զարգացման ծրագիր

Քննարկվում է Հայաստանում միջուկային իզոտոպների արտադրության ծրագիր՝ ռուսական Ռեսուրսներ և Տեխնոլոգիաներ ընկերության հետ:

Ակնկալվող ներդրումների ծավալը՝ 60 մլն եվրո, աշխատատեղերի քանակը՝ 400:

5.5 Ընդեղենի այգիների ստեղծման ծրագիր

Քննարկվում է Հայաստանում ընդեղենի այգիների ստեղծման ծրագիր՝ կանադական Հայաստան Ներդրումներ կազմակերպության հետ:

Առաջին փուլի ակնկալվող ներդրումների ծավալը՝ 20 մլն ԱՄՆ դոլար, աշխատատեղերի քանակը՝ 150:

5.6 Հետներդրումային (aftercare) ծառայություններ

Ներդրողների աջակցության միջոցառումների շրջանակում տեղի են ունեցել այցեր Հայաստանում օտարերկրյա շուրջ 20 ընկերություն: Համապատասխան հարցաշարերի կիրառմամբ հավաքագրվել է ներդրողների կողմից տրամադրված տեղեկատվությունը ՀՀ-ում գործարարությամբ զբաղվելու, վարչարարական ընթացակարգերի, գործարար ակտիվության ընդլայնման և հիմնախնդիրների վերաբերյալ: Ներկայում ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ գործնական քննարկումներն են ընթանում հավաքագրված տեղեկատվության մասով (ԱԱՀ վճարման խնդիր «Կառֆուր» ընկերությունում, մաքսատուրքի վճարման խնդիր սահմանային անմաքս առևտրի կետում և այլն):

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ